ԱԶԴԱԿ
ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE أزتاك جريدة يوميّة سياسية وأدبية - المديرة المسؤولة: إيڤا درويشيان

1000 Լ.Ո. 71ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 256 (19556) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ՅՈՒՆՈՒԱՐ 1997 10 ԷՋ

ԹՈՒՐՔԻՈՅ ՄԻՋԱՆՁԱՆՔԻ ԵՆԹԱՐԿՈՒԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ

ԱՆԳԱՐԱ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Դանիա Չորեքշաբթի օր Թուրքիոյ դէմ գանգատ ներկայացուց մարդկային իրաւանց Եւրոպական Խորհուրդին, որովհետեւ թրքական իշխանութիւնները անցեալ տարի տանջանքի ենթարկած են քրտական ծագումով դանիացի մը, պայն մեղադրելով իբրեւ Ք. Ա. Կուսակցութեան հետ գործակցող:

Քեմալ Քոչ ձերբակալուած էր անցեալ ամառ, տանջանքի ենթարկուած էր եւ յետոյ արտաքսուած: Անոր դատավարութիւնը կը շարունակուի Թուրքիոյ մէջ:

ՄՈՍԱՏԻ ԼՐՏԵՄՆԵՐ ԿԸ ՅՈՒՅԱԴՈՒԻՆ ՊԱՂՏԱՏԻ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒԻՒՆ

ՊԱՂՏԱՏ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Իրաքեան պատկերասփիւռը Չորեքշաբթի օր ցուցադրեց 3 անձեր, որոնք խոստովանեցան թէ լրտեսութիւն ըրած են Մոսատի հաշուոյն:

Լրտեսութիւնը կատարուած է Թուրքիոյ ճամբով: Անոնց դրամ խոստացուած է ու անոնց տրամադրութեան տակ դրուած են հաղորդակցութեան յատուկ սարքեր, որպեսզի տեղեկութիւն փոխանցեն իրաքեան բանակին մասին: Մոսատը անոնց հաւատացուցած է թէ պիտի չձերբակալուին:

ՔԱԹԻՈՒՇԱՆԵՐ ԴԷՊԻ ԻՍՐԱՅԷԼ

ՕԳԱՆԱՒԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԹԸՖՖԱՀԻ ՎՐԱՅ

Չինադուլի յանձնախումբին երէկուան «հաւաստարակչռուած» կոչը (տեսնել 2րդ էջ) կարծէք արձակուած էր հարաւեան իրաղարձութիւններէն անկախ ալիքի մը վրայ, որովհետեւ գինուորական գործողութիւններն ու իսրայէլեան օդանաւային յարձակումները յաւելեալ վտանգաւորութեան տարին չրջանի վիճակը:

Իսրայէլեան աղբիւրներ երէկ գիշեր հաւաստեցին, որ Լիբանանէն քաթիուշա տիպի հրթիռ մը արձակուած է դէպի Գալիլիոյ արեւմտեան չրջանը, սակայն որեւէ վնաս չէ արձանագրուած: «Հ. Լ. Բանակ»ի աղբիւրները յայտնեցին, որ «քանի մը քաթիուշաներ» արձակուած են դէպի Իսրայէլ եւ «սահմանային գօտի»: «Հըզպոլլա» յայտարարեց, որ տեղեակ չէ որեւէ հրթիռարձակումէ:

Իսրայէլեան յիշեալ յայտարարութիւններուն յաջորդեցին Թըֆֆահի վրայ օդանաւային յարձակումներ, որոնք նորագոյն փուլի ամէնէն տարածունն ու սաստիկն էին: Հետեւանքներուն մասին տեղեկութիւն չհաղորդուեցաւ Պէյրութ:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԿԱՐԵԼԻ ՉԷ ՅԵՏԱՁԳԵԼ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԸ



Պոլքը՝ Երկուշաբթիի Գիստիճ

Հայկական Երեսփոխանական Պոլքը Երկուշաբթի օր առաջին գործնական քայլը առաւ Պուրճ Համուտի ծովեզերեայ աղբանոցը փակելու աշխատանքին ճամբուն վրայ, յայտարարելով, որ բողոքի աստիճանաբար սաստկացող քայլերու պիտի դիմուի, եթէ Անթիլիասէն մինչեւ Նահր Մոթ, Տորա, Պուրճ Համուտ եւ Էշրեֆիէ տարածուող շրջանի բնակիչներուն առողջական վիճակին սպառնացող այս վտանգը դարմանելու քայլերուն ձգձգումը շարունակուի: Պոլքին ժողովէն բխած յայտարարութիւնը կը յիշատակէր խորհրդարանական գործադուլէ մինչեւ ճամբաներ փակելու եւ ընդհանուր գործադուլի միջոցները:

Հայկական Պոլքը հապճեպորէն նման քայլերու կը դիմէ, չըսելու համար, որ այս քայլը աննախընթաց է:

Թող ոչ ոք այս որոշումին մէջ ժխտական մօտեցում կամ յետին նպատակներու հետապնդում տեսնէ, որովհետեւ ժողովուրդին՝ հարիւր-հազարաւոր բնակիչներու համար առողջ կեանքի պահանջին մէջ չի կրնար ըլլալ ժխտական երեւոյթ, ոչ ալ յետին նպատակ:

Հայկական Պոլքին այս որոշումը կարճ ժամանակամիջոցի մը մէջ կուտակուած դժգոհութեան արտայայտութիւնը չէ, որովհետեւ աղբակոյտը արդէն ունի աւելի քան 2 տարուան պատմութիւն, որուն վերջին քանի մը ամիսները եղան աղէտի մը եւ ողբերգութեան մը սպառնալիքներուն համապար: Երբ նախորդ կառավարութեան օրով, մօտաւորապէս 10 ամիս առաջ տրուեցաւ աղբանոցին փակման որոշումը, կարծէք թէ անիկա աղդանշան մը եղաւ... կոյտը շատ աւելի արագ կերպով բարձրացնելու: Իսկ երբ երկու յետագայ ձգումներէ ետք, կառավարութիւնը 27 Դեկտեմբերի իր նիստին խուսափեցաւ իր խոստումէն ու չվճռեց փակումը, կենսոլորտի նախարարութեան այս շաբաթակիզբի յայտարարութիւնները պարզապէս եկան ցոյց տալու, որ ձգձգումի ընթացքը կը շարունակուի: Այլապէս, ինչպէ՞ս բացատրել կենսոլորտի նախարարին այն հաւաստիքը, թէ աղբանոցին փակման գործողութիւնը պիտի սկսի 3-4 ամիսէն, մինչ այդ պիտի պատրաստուին Քարանթինայի եւ Ամրուսիէի հրկիզման կայանները, կարգադրութիւններ պիտի ըլլան աղբերու «դասակարգումի» եւ թաղումի համար...: Արդեօք այս բոլորը նորահնար միջոցներ են, թէ անհարթելի դժուարութիւններ կը դիմագրաւէին անցեալ 8-10 ամիսներուն, որպէսզի նախարարութիւնը եւ անոր կողքին կանգնող կառավարութիւնը միայն այսօր կը սկսին այդ մասին մտածել...

Աշխարհի ամէնէն քաղաքակիրթ ու կարգացած երկիրներէն մինչեւ ամէնէն համեստը նկատած են եւ տակաւին հրաժարական չեն հասած:

Հեպրոնի համաձայնագիրը տասը ամիսէ ի վեր կ'ուշացուի ապահովութեան մանրամասնութիւններու պատճառով: Այս վերջին ուշացումին պատճառը, սակայն ապահովութեան դրութիւնը չէ, այլ Հեպրոնէն ետք մնացեալ չրջաններու հարցն է: Իսրայէլ կ'առաջարկէ, որ Այսրյորդանանի մնացեալ չրջաններուն յանձնումը յետաձգուի մինչեւ 1999:

Իսրայէլի վարչապետ Նեթանեամ երեք պաղեստինեան կողմին ուսերուն ձգեց Հեպրոնի համաձայնագիրին ուշացման պատասխանատուութիւնը:

Ու մինչ Ռոսի ճիգերն ու բանակցութիւնները մատնուած են տեղքայլի, Հեպրոն չրջանին մէջ հրեաները կը պատրաստուին նոր վայրի մը հիմնարկէքը կատարել:

ՄԻՆՉ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՆՈՐ ՎԱՅՐ ՄԸ ԿԸ ՆԱԽԱԳԾՈՒԻ

ՌՈՍԻ ՃԻԳԵՐՆ ՈՒ ՀԵՊՐՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒԱԾ

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 8 (ՌՅՈԹԸՐ).- Միացեալ Նահանգները Չորեքշաբթի օր սպառիչ աշխատանք տարին փրկելու համար ՊԱԿի եւ Իսրայէլի միջեւ ստորագրուելիք Հեպրոնի համաձայնագիրը, այն պահուն, երբ պաղեստինցիներ կը յայտարարէին, որ բանակցութիւնները չափազանց յարաւած են եւ տակաւին հրակայ բացեր կան իրենց եւ Իսրայէլիտեսակէտներուն միջեւ:

Ամերիկացի պատուիրակ Տենիս Ռոս, որ Երեքշաբթի գիշեր հինգ ժամ տեսակցութիւն ունեցած էր ՊԱԿի ղեկավար Եասէր Արաֆաթի հետ, չյաջողեցաւ ստորագրումի հանգրուանին հասցնել Հեպրոնի համաձայնագիրը: պաղեստինցի պատուիրակներուն, որ Ռոսի հետ բանակցութիւնները յարուցած կին: Տեսակցութեան աւարտին, Ռոս յայտարարեց, որ տակաւին համաձայնութեան չեն հասած:

Հեպրոնի համաձայնագիրը տասը ամիսէ ի վեր կ'ուշացուի ապահովութեան մանրամասնութիւններու պատճառով: Այս վերջին ուշացումին պատճառը, սակայն ապահովութեան դրութիւնը չէ, այլ Հեպրոնէն ետք մնացեալ չրջաններու հարցն է: Իսրայէլ կ'առաջարկէ, որ Այսրյորդանանի մնացեալ չրջաններուն յանձնումը յետաձգուի մինչեւ 1999:

Իսրայէլի վարչապետ Նեթանեամ երեք պաղեստինեան կողմին ուսերուն ձգեց Հեպրոնի համաձայնագիրին ուշացման պատասխանատուութիւնը:

Ու մինչ Ռոսի ճիգերն ու բանակցութիւնները մատնուած են տեղքայլի, Հեպրոն չրջանին մէջ հրեաները կը պատրաստուին նոր վայրի մը հիմնարկէքը կատարել:

ՄԻՒՊՂՐԼՔԻ ՀԵՏ ԴԵՐԱՍՏԻՃԱՆԸՆ ՄԸ ԵՏՔ

ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՊԱՐՊՈՒԻՄԻ ԺԱՄԿԷՏԸ ՊԷՏՔ Է ՅԱՐԳՈՒԻ

ԿԸՍԷ ՀԻՒՍԷՅՆ ԹԱԼԳԱՒՈՐԸ

ԱՄՈՒԱՆ, 8 (ՌՅՈԹԸՐ).- Նուպիացի պարոդներ եւ թմրկահարներ Չորեքշարթի օր Ասուանի մէկ դիմաւորեցին Յորդանանի Հիւսէյն թագաւորն ու Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաքը, որոնք տեսակցութիւն կ'ունենան, քննարկելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին նորագոյն փուլը:

Երկու ղեկավարներուն տեսակցութիւնը տեղի ունեցաւ Նեղոսի վրայ գտնուող կղզիի մը մէկ պանդոկին մէջ: Հիւսէյն թագաւորին եւ Մուպարաքի կ'րնկերանային պատուիրակութիւններ, որոնք ներկայ եղան հանդիպումին: Յորդանանի պաշտօնատարներ ըսին, որ երկու ղեկավարները պիտի փորձեն լուծումներ գտնել խաղաղութեան գործընթացը արգելակող խոչընդոտներուն: Յորդանան եւ Եգիպտոս մտահոգ են պաղեստինցիներու եւ Իսրայէլի միջեւ խաղաղութեան համաձայնագիրներու գործադրութեան ուշացումով, Ապրպէյճանի նախագահ Հայդար Ալիեւ եւ Ռուսիոյ փոխ վարչապետ Վ. Սերով Երկուշաբթի օր, Պաքուի մէջ հանդիպում ունեցած են: «Իթար Թասս» կը հաղորդէ, որ քննարկուած են փոխադրական միջոցներու վերակառուցման եւ արտադրութիւններու փոխանակման վերաչխուժացման առնչուող հարցեր: Ալիեւ ըսած է, որ Ապրպէյճան պատրաստ է քարիւղի արդիւնաբերութեան, գիտենիութերու, բանջարեղէնի եւ բամպակի արտադրութիւններ արտածել դէպի Ռուսիա, որ իր կարգին կրնայ գանոնք փոխարինել այն ապրանքներով, որոնք չեն արտադրուիր Ապրպէյճանի մէջ: Երկու կողմերն ալ յայտնած են, որ Ապրպէյճանի եւ Ռուսիոյ յարաբերութիւններու հեռանկարները նոյնն են մեծ մասամբ:

Քաղաքական ծիրին մէջ երկու կողմերը րնդգծած են կարեւորութիւնը չրջանի մէջ կայունութեան ամրապնդման, մասնաւորաբար Ղարաբաղի հարցին խաղաղ լուծման ուղղութեամբ աշխատանքներ:

• ՔՈՒԷՅԹԻ իշխան չէյխ Ժապէր Ահմէտ Սապահի հրամանով, Պաքու դրկուած են մարդասիրական օգնութիւններ, որոնք պիտի տրամադրուին Ղարաբաղի գաղթականներուն: Քուէյթ անցեալին ալ նման օժանդակութիւններ տրամադրած է Ապրպէյճանին:

ՌՈՒՍԻԱ - ԱԶՐՊԷՅՃԱՆ ԱՌԵՒՏՈՒՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ՁՕՐԱՎԻԳ՝ ԵՒՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Ալեքսանտր Արզումանեան պաշտօնական այցելութեան համար Յունաստան կը գտնուի: Երեքշաբթի օր, Ա. Արզումանեան հանդիպում ունեցած է Յունաստանի արտաքին գործոց նախարար Թէոտորոս Փանկալոսի հետ: Քննարկուած են երկու երկիրներու միջեւ գործակցութեան, Լեռնային Ղարաբաղի հարցին գծով Յունաստանի դերակատարութեան եւ Սեւ-ծովեան չրջանի տնտեսական գործակցութեան հետ առընչուող հարցեր: Փանկալոս յայտնած է, որ Յունաստան պիտի օժանդակէ Եւրոխորհրդարանի լիագօր անդամ դառնալու Հայաստանի առաջադրանքին եւ տնտեսական բարեփոխումներու գործընթացին մէջ:

Ա. Արզումանեան երէկ հանդիպումներ ունեցաւ պաշտպանութեան նախարար Աքիս Յոխ-Յոփուլոսի եւ խորհրդարանի նախագահ Ափոսթոլոս Քաքլամանիսի հետ:

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆԷՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ՝ ԸՆԿ. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Ընկ. Վահան Յովհաննիսեան Նոր Տարուան եւ Ս. Մնունդին առիթով չնորհաւորական գրութիւն մը ստացած է Ա. ԺՄ ի նախագահ Վազգէն Մանուկեանէն, որ իր նամակին մէջ նշած է, թէ հակառակ իշխանութեանց կարծիքին, ժողովուրդը ապացուցեց, որ չէ հիասթափուած եւ «ժողովուրդին համար կարժէ ամէն բան գոհել»:

Ըստ փաստարան եւ Ա. Ժ. Մ ի վարչութեան անդամ Վովո Հախվերդեանի, Վ. Մանուկեան չնորհաւորական նամակներ յղած է նաեւ միւս բանտարկեալներուն, Սեպտեմբերեան իրադարձութիւններուն յոյսին տակ ձերբակալուածներուն եւ «Դրօ»ի գծով դատապարտուածներուն:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՔԱՅԼԵՐ՝ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՄԱՐ

Ուաշինկթըն, որ մտահոգ է ռուսական հակօդային հրթիռներ գնելու Կիպրոսի ծրագիրով, այս չարաթվերջին պիտի վերանորոգէ իր ճիգերը՝ մեղմացնելու համար լարուածութիւնը Կիպրոսի յոյն եւ թուրք բնակիչներուն միջեւ, յայտնեցին պաշտօնատարներ:

Հարաւային Եւրոպայի հարցերու բաժանմունքի տնօրէն Քարի Քաւանօ Կիպրոս պիտի այցելէ Կիրակի եւ Երկուշաբթի օրերուն: Քաւանոյի այցելութեան նպատակը պիտի րլլայ քաղաքական լուծում մը րնթացքի մէջ դնել:

(ՌՅՈԹԸՐ)

Հ. Յ. Դ. ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Երէկուան մեր համարով հաղորդած էինք, որ Հայաստանի Արդարութեան նախարարին եւ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչներուն միջեւ 7 Յունուարին նախատեսուած հանդիպումը յետաձգուած է 24 ժամով: «Երեւան» տեղեկատուական կեդրոնը հանդիպումին մասին երէկ հաղորդեց հետեւեալ հեռագրալուրը, զոր կու տանք ամբողջութեամբ.

Դեկտեմբերի 31ին Հ. Հ. Արդարադատութեան նախարարութիւնում տեղի ունեցաւ նախապէս յայտարարուած հանդիպումը գերատեսչութեան ղեկավարութեան եւ Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմնի պատուիրակութեան միջեւ: Նախարարութիւնը ներկայացնում էին նախարար Մարատ Ալեքսանեանը, փոխնախարար Տիգրան Պետրոսեանը, պաշտօնատար այլ անձինք, իսկ Գ. Մ.ի կողմից հանդիպմանը մասնակցում էին Ռուբէն Յակոբեանը, Գագիկ Մկրտչեանը, Ռոլանդ Շառոյեանը: Ներկայ էին նաեւ կանգուածային լրատուութեան միջոցների բազմաթիւ ներկայացուցիչներ:

Սկզբից եւեթ նախարարութեան եւ Գ. Մ. միջեւ ծրագրուած հանդիպման բնոյթը որոշակի փոփոխութիւն կրեց, քանի որ լրագրողների ներկայութեամբ երկխօսութեան փոխարէն, առաջիններն ունեցան չուրջ մէկուկէս ժամ տեւողութեամբ առանձնագրոյց: Այնուհետեւ, վերադառնալով գերատեսչութեան մամլոյ սրահ, կողմերը՝ ի դէմս Մարատ Ալեքսանեանի եւ Ռուբէն Յակոբեանի, արտայայտեցին իրենց տեսակէտները Հ. Յ. Դ. գործունէութիւնը Հայաստանում վերսկսելու սկզբունքների վերաբերեալ:

Ինչպէս ասաց նախարարը, իր ղեկավարած գերատեսչութիւնը յստակ դիրքորոշում ունի սոյն հարցի առնչութեամբ. խնդիրը պէտք լուծուի գործող օրէնսդրութեան սահմաններում: Ելնելով վերոնշեալից՝ նա յիշեցրեց, որ նախքան նախորդ տարի գումարուած Հ. Յ. Դ. Գերագոյն Ժողովը, նախարարութիւնը հանդէս էր եկել մի յայտարարութեամբ, ըստ որի, սոյն ժողովը չէր ճանաչւում որպէս օրինական միջոցառում, քանզի ժողովի գումարման վերաբերեալ վճիռը տրուել էր մինչ

2

ՖՐԱՆՍԱ՝ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻՆ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀ

Ե Ա Գ կազմակերպութեան Մինսքի խմբակի համանախագահ նշանակուեցաւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան քաղաքական եւ անվտանգութեան հարցերու բաժանմունքի տնօրէն Ժաք Պոտին:

Ե Ա Գ կազմակերպութեան նախագահ՝ Ջուլիեթրիոյ արտաքին գործոց նախարար Սյաւիս Կոտտին կատարած է այս նշանակումը՝ անդամ բոլոր երկիրներու ներկայացուցիչներու հետ խորհրդակցելէ ետք: Պոտին պիտի փոխարինէ Ֆինլանտացի Հէյկկ Տալուիտիէ եւ նախագահութիւնը պիտի վարէ Ռուսիոյ հետ միասին:

Ըստ «Ագատութիւն» ձայնասփիւռի կայանին, Միացեալ Նահանգներ Լիգպոնի ժողովին աշխատանք տարած է պաշտօնը ստանձնելու համար եւ այս որոշումին առիթով, ամերիկացի պիւանագէտներ հիասթափութիւն յայտնած են: Ակրպէյճան կը պաշտպանէր Միացեալ Նահանգներու թեկնածութիւնը, իսկ Ռուսիա կը նախընտրէր Ֆրանսայի հետ պաշտօնավարել համանախագահութիւնը:

«ՀԸԶՊԱԼԼԱ»Ի ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄՕՏԻԿ ԿԸ ԶԳԱՅ ՀԱՐԱՒԻ ՊԱՅՔԱՐԻՆ

ԿԸՍԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդեան տօներուն առիթով քրիստոնեայ համայնքապետներուն տրուած շնորհաւորական այցելութիւններու ծիրին մէջ, «Հըզպալլա»ի մէկ պատուիրակութիւնը երէկ այցելեց Կիլիկիոյ Կաթողիկոսարանը եւ ընդունուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ: Պետական լրատու գործակալութեան համաձայն, «Հըզպալլա»ի պատուիրակութեան մաս կը կազմէին քաղաքական դիւանի փոխ նախագահ Հաժ Մահմուտ Քաթիր եւ դիւանի անդամ Նաուաֆ Մուսաուի:

Արամ Ա. Վեհափառ «Հըզպալլա»ի պատուիրակներուն վստահեցուց, որ իսրայէլեան գրաւումին դէմ պայքարը Լիբանանեան այս կամ այն հատուածը հետաքրքրող առանձնակի հարց չէ, այլ ազգային դատ մը, որ իր շուրջ ի մի կը բերէ բոլոր լիբանանցիները: «Իր ազատութեան եւ հայրենիքին համար դարերով պայքարած Հայ ժողովուրդը ինքզինք խորապէս մօտիկ կը գտայ Հարաւի դիմադրութեան», շեշտեց Վեհափառը:

Այնուհետեւ, «Հըզպալլա»ի պատուիրակութիւնը այցելեց Հայ կաթողիկէ պատրիարքարան եւ ընդունուեցաւ Յովհաննէս Պօղոս ԺԲ. Գասպարեան Կաթողիկոս պատրիարքին կողմէ: Գասպարեան պատրիարքը կօրակցութիւն յայտնեց Հարաւի դիմադրութեան եւ կոչ ուղղեց աշխատանք տանելու ի խնդիր Լիբանանի մէջ ազատութիւնների պահպանման: Պատրիարքը անհրաժեշտ համարեց նաեւ վերատեսութեան ենթարկել կառավարութեան տնտեսական քաղաքականութեան առաջնահերթութիւնները, բաւարարութիւն տալու համար քաղաքացիներու հիմնական պահանջներուն:

ՊՈՒԷՅԶ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Արտաքին գործոց նախարար Փարես Պուէյզ երեկ Դամասկոսի մէջ հանդիպում ունեցաւ Սուրիոյ իր պաշտօնակիցին՝ Ֆարուք Շարեէի հետ, քննարկելով Միջին Արեւելքի ընդհանուր կացութիւնը եւ երկու երկիրներուն յարաբերութիւններուն վերաբերող հարցեր:

Պուէյզ յայտարարեց, որ Լիբանան եւ Սուրիա միակամ են շրջանային բոլոր իրադարձութիւններուն եւ խաղաղութեան գործընթացին նկատմամբ:

Նախքան Շարեէի հետ հանդիպումը, Պուէյզ տեսակցութիւն ունեցաւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտել Հալիմ Խաddամի հետ:

Լիբանանի պետական եւ քաղաքական բազմաթիւ անձնաւորութիւններ երեկ հեռագիրներ յղեցին Սուրիոյ նախագահ Հաֆեզ Ասատի, շնորհաւորելով զայն վերաբուժական յաջող գործողութեան համար, որ տեղի ունեցած էր 2 օր առաջ:

ՊԸՐՐԻ ԿԸ ՀԵՏԵՒԻ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԱՂԲԱՆՈՑԻՆ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐՈՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի այցելող երեսփոխանները երեկ հաղորդեցին, որ Պըրրի մտավախութիւն ունի Հարաւի կացութեան վատթարացման եւ Իսրայէլի յարձակողական տրամադրութիւններուն շեշտումին ուղղութեամբ: Պըրրի շեշտած է, որ իշխանութիւնները պէտք է թիկունք կանգնին Հարաւի ժողովուրդին եւ վօրացնեն անոր դիմադրականութիւնը՝ ընդդէմ իսրայէլեան ոտնձգութիւններուն:

Խորհրդարանի նախագահին երեկուան հանդիպումներուն օրակարգին վրայ էր նաեւ Պուրճ Համուտի աղբանոցի հարցը: Պըրրի հաղորդակցութեան մէջ մտաւ շարք մը պետական պատասխանատուներու հետ, ստուգելու համար այն տեղեկութիւնները, ըստ որոնց, Պուրճ Համուտի ծովափին թափուող աղբերը կ'օգտագործուին պարարտացուցիչ նիւթեր արտադրելու համար: Պըրրի այս երեւոյթը որակեց վնասակար հանրային առողջութեան:

Նշենք, որ Պըրրիի այցելած երեսփոխաններուն շարքին էր մեծ Յակոբ Չուխաճարեան:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ 5000 ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ԴԻՄՈՒՄ

Բնակարանային հարցերու նախարար Մահմուտ Ապու Համտան երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ անոր հետ քննարկեց չարք մը հարցեր:

Ապու Համտան հաղորդեց, որ ներկայիս նախարարութեան մօտ կայ բնակարաններու գնման նպատակով վարկեր ստանալու համար դիմում, որոնք մնացած են անպատասխան: Ան ըսաւ, որ Ամանորի նախօրեակին, նախարարութիւնը բնակարան գնելու համար վարկեր տրամադրած է 500 ընտանիքի, իսկ անհրաժեշտ պայմանները ամբողջացնող 1180 դիմումներու բաւարարութիւն պիտի տրուի բնակեցումի անկախ սնտուկի հաշուոյն «վարկերու հարցը լուծելու համար անհրաժեշտ է արագացնել բնակեցումի պետական հաստատութեան կազմութիւնը», ըսաւ նախարարը: Ըստ անոր նախատեսութեան, հաստատութեան կազմութիւնը տեղի պիտի ունենայ փետրուարի սկիզբին:

ԻՍՐԱՅԵԼԱՑԻ 3 ԶԻՆՈՒՈՐ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ՀԱՐԱՒԻ ՄԷՋ

Հարաւի Դիմադրութիւնը երէկ կատարեց ռմբային գործողութիւն մը, որուն հետեւանքով վիրաւորուեցան իսրայէլացի 3 զինուորներ, որոնցմէ մէկուն վիճակը ծանր է:

Գործողութիւնը տեղի ունեցաւ Արեւմտեան Պեքաայի Ապու Ռաշէտ շրջանին մէջ: Իսրայէլեան աղբիւրներ հաստատեցին լուրը:

Դիմադրութիւնը յարձակումներ գործեց նաեւ Նիհայի մէջ հաստատուած «Հարաւային Լիբանանի Բանակ»ի դիրքերուն վրայ, իրրեւ հակադարձութիւն՝ Արեւմտեան Պեքաայի շարք մը շրջաններու վրայ կատարուած ռմբակոծումներուն:

Միւս կողմէ, իսրայէլեան մարտանաւեր Սուրի դիմաց կրակ բացին ճկնորսական 2 մակոյկներու վրայ, որոնք ենթարկուեցան նիւթական վնասներու:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

•ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Մուհսէն Տալլուլի *որոշումով, վաղուընէ սկսեալ գէնքի արտօնագիրները դարձեալ ի գործ կը դառնան: Արտօնագիրները սառեցուած էին Ամանորի նախօրեակին:*

•*ՌԱՄԱՏԱՆ* ամսուան առիթով, եւ ընդառաջելով երկրագործութեան նախարար Շաուքի Ֆախուրիի խնդրանքին, հաւաբոյծներու սենտիքան որոշեց մէկ քիլոկրամ հաւի գինը նուազեցնել 500 լիր. ոսկիով:

•ՊԷՅՐՈՒԹԻ մօտ Հայաստանի դեսպան Երուանդ Մելքոնեան երէկ այցելութիւն մը տուաւ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրկլիի:

•ԵՐԵՍՓՈԽԱՆ Էմիլ Նաուֆալ երէկ բացումը կատարեց իր ծախսերով չինուած կոմունակի ճամբուն մը, Ժիպկլլի մէջ: Ճամբուն բացումը երեսփոխանին արժած է 115 միլիոն լիր. ոսկի:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մեծր Խաչիկ Պապիկեան եւ զաւակունք, տիար Արա Պապիկեան եւ զաւակունք, Կրասսի եւ Գուլումճեան ընտանիքներ խորին շնորհակալութիւն կը յայտնեն հաւրապետութեան նախագահ Իլիաս Հերաուիի, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի, Արամ Ա. Կաթողիկոսին, Յովհաննէս Պետրոս ԺԵ. Գասպարեան Կաթողիկոս - Պատրիարքին, Գեղամ վրդ. Խաչերեանի, նախարարներու, երեսփոխաններու, ազգային, քաղաքական եւ կուսակցական անձնաւորութեանց եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, հաղորդակցութեամբ եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց մօր եւ հարազատին՝ ԵՐԱՆՈՒՀԻ ՊԱՊԻԿԵԱՆի մահուան սուգին:

ՉԻՆԱԴՈՒԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԷՆ ԿՈՉ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼ ԲԱԽՈՒՄԻ ԴԱՇՏԵՐԷՆ

Ապրիլեան գինադուլի հսկիչ յանձնախումբ երէկ կոչ ուղղեց Հարաւի մէջ հակամարտ կողմերուն, որ անհրաժեշտ գոյուութիւն գոյացարերեն իրենց գործողութիւններուն ընթացքին, վնաս չպատճառելու համար քաղաքացիներուն եւ անոնց ստացուածքին:

Իր երկօրեայ ժողովին աւարտին, յանձնախումբը պահանջեց Իսրայէլէն եւ «Հըզպուլլա»էն, որ յատկապէս հեռու մնան իրենց գործողութիւններուն համար քաղաքային շրջանները իրրեւ խարիսխ օգտագործելէ:

Յանձնախումբին կոչը հրապարակուեցաւ Նաքուրայէն, Իսրայէլի եւ Լիբանանի կողմէ ներկայացած 6 րոպոքներու քննարկումին աւարտին: Երկու երկիրները փոխադարձաբար ամբաստանած էին գիրար՝ ապրիլեան գինադուլը խախտած լլալու յանցանքով:

Յանձնախումբը պահանջեց, որ հակամարտ կողմերու պատասխանատուները ինքնագսպում ցուցարերեն, կանխարգիլելու համար ապահովութեան վիճակի վատթարացումը:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐՁԱԱՆԳԸ

Արտաքին գործոց նախարարութիւնը անհիմն համարեց իսրայէլեան լրատուադրիւրներուն այն վերլուծումը, ըստ որուն, յանձնախումբը Հարաւի դիմադրութիւնը մեղադրած է գինադուլի խախտումին համար: «Յանձնախումբը մերժեց ընդունիլ Իսրայէլի այն պնդումը, թէ դիմադրութեան գործողութիւնները ընթացք առած են քաղաքային շրջաններէ», նշեց նախարարութեան բանբերը: Ան աւելցուց, որ յանձնախումբին մէջ Լիբանանի ներկայացուցիչները անգամ մը եւս չեշտած են գինադուլի պայմաններուն ծիրին մէջ գրաւող ուժերուն դէմ պայքարելու լիբանանցիներու իրաւունքը:

ՅԱՆՑԱԽՈՐԸ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՆ ԷԻՆ

Քննիչ դատաւոր Սայիտ Միրգայի որոշումով, «Սոլիտէր» ընկերութիւնը գերծ կացուցուեցաւ դատական հետապնդումէ, Ուստի Ապու Ժեմիլի շրջանին մէջ փուլ եկած չէնքին հարցով:

Յիշեցնենք, որ անցեալ Փետրուարին, փուլ եկած էր գաղթականներով բնակուած չէնք մը, որ պատճառ դարձաւ 14 անձերու մահուան եւ 4 ուրիշներու վիրաւորուելուն: Օրին, «Սոլիտէր» ամբաստանուեցաւ թէ չէնքը փուլ բերած է նախքան բնակիչներուն հեռացումը:

Դատաւոր Միրգա 6 ամիսէն մինչեւ 3 տարի բանտարկութեան պատիժ պահանջեց ընկերութեան 6 պաշտօնեաներու դէմ, գանոնք ամբաստանելով մարդոց կեանքին հանդէպ անգթօրէն վերաբերմունք ունեցած ըլլալու յանցանքով:

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ.

ՆՈՐ ԱՐՏՕՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԱԹ

Տեղեկատուութեան նախարար Պասէմ Սապրհ երէկ ժողով մը գումարեց Տեղեկատուութեան Ագգային Խորհուրդին հետ, քննարկելով լսատեսողական տեղեկատուութեան մարգի կարգաւորման գործընթացին կապուած հարցեր:

Քննարկման նիւթ դարձան տեղեկատուութեան այս մարգին ու յատկապէս արբանեակներու միջոցով հաղորդումներու մասին կառավարութեան տուած վերջին որոշումներուն գործադրութեան առընչուած հարցեր:

Սապրհ յայտարարեց, որ յառաջիկայ չարաթ նախարարութիւնը պիտի ուսումնասիրէ պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի չարք մը կայաններու արտօնագրերի դիմումները, որոնք ներկայացուած էին պայմանաժամի վերջին երկարաձգումէն ետք: «Նախարարութեան մէջ ուսումնասիրուելէ ետք, թղթածրարները պիտի փոխանցուին տեղեկատուութեան ագգային խորհուրդին ու ապա կառավարութեան, որ պիտի տայ վերջնական որոշումները», ըսաւ Սապրհ:

Հ. Յ. Դ. ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ...

←

այդ Պէյրութում կայացած Հ. Յ. Դ. 26րդ Ընդհանուր Ժողովի կողմից: Նախարարը նշեց նաեւ, որ երկու անգամ իրենց ներկայացած Գ. Ժ. արձանագրութիւնները ամբողջական չէին եւ չէին տալիս տեղի ունեցածի յստակ պատկերը: Յիշեցնելով Հ. Յ. Դ. կասեցման իրաւական հիմքը, այն է՝ 1995թ. Յունուարի 13ին Հ. Հ. Գերագոյն Դատարանի կողմից ընդունած որոշումը, ըստ որի՝ Հ. Յ. Դ-ն կասեցուում է իր կազմում արտասահմանեան քաղաքացիներ ունենալու պատճառով, նա առաջարկեց վերացնել սոյն «հիմքը»՝ օգտագործելով Հ. Յ. Դ. կանոնադրութեան ընձեռած հնարաւորութիւնները: Ասուեց նաեւ, որ Հ. Յ. Դ. Գ. Մ-ն գործունէութիւնը վերսկսելու համար պահանջում է կասեցումից ելնելու մեխանիզմներ, մի բան, ինչն անել իրենք իրաւասու չեն՝ նկատի առնելով Հ. Հ. Սահմանադրութիւնը: Հետեւաբար, սոյն հարցը լուծել կարող է միմիայն Հ. Յ. Դ. ղեկավարութիւնը անդրադառնալով իր կանոնադրութեանը:

Ռուբէն Յակոբեանի խօսքում ակնյայտ դարձաւ, որ Գ. Մ-ն խորապէս համոզուած է կասեցման իրաւական հիմքի չգոյութեան մէջ, քանի որ նախարարի մատնանշած՝ Գերագոյն ժողովի ընդունած նոյն կանոնադրութիւնը վերացրել է իրաւական բոլոր խնդիրները: Անդրադառնալով դեռեւս 1995թ. պատական վճռին, որտեղ արձանագրուած է նախարարութեան պատասխանատուութիւնը եւ պարտաւորութիւնը կասեցումից ելնելու մեխանիզմներ մշակելու վերաբերեալ, նա տարակուսանք յայտնեց վերջին երկու տարիներում այդ ուղղութեամբ որեւէ քայլի բացակայութեան առնչութեամբ: Գ. Մ. ներկայացուցիչը միանշանակօրէն եզրակացրեց, որ խնդիրն իրաւական մակարդակից ի սկզբանէ տեղափոխուած է քաղաքական դաշտ, այսինքն՝ Հ. Յ. Դ. կասեցումը զուտ քաղաքական հարց է, մանաւանդ եթէ նկատի առնենք, որ յիշեալ իրաւական հիմքը հաւասարապէս կարող է վերաբերել Հայաստանում գործող բազմաթիւ կուսակցութիւնների եւս: Խօսելով կանոնադրութեան «ընձեռած հնարաւորութիւնների» մասին՝ Ռ. Յակորեանը նախարարի այդ մատնանշումը համարեց ոչինչ չասող բան: Այնուհանդերձ, պատրաստակամութիւն եւ ցանկութիւն յայտնուեց չարունակել երկխօսութիւնը:

Պատասխանելով լրագրողների հարցերին՝ նախարարն ընդգծեց, որ Հ. Յ. Դ. վերաբերեալ հարցը տեղափոխել Սահմանադրական Դատարան չի կարելի, քանի որ դրուած է ոչ թէ կասեցման, այլ՝ կուսակցութեան գործունէութեան վերսկսման հարց:

Ուշագրաւ է հետեւեալ դիտարկումը. այն հարցին, թէ արդեօք ներկայացուած կանոնադրութիւնը չի վերացրել Հ. Յ. Դ. հայաստանեան կազմակերպութեան ինքնուրոյն լինելու վերաբերեալ կասկածները, Մ. Ալեքսանեանը, իրեն իրաւունք չվերապահելով պատասխանել, այնուհանդերձ, դիմեց Գ. Մ. ներկայացուցիչներին՝ ցանկանալով լսել, թէ արդեօք նրանք պատրաստ են յայտարարել, որ «իրենք կապ չունեն դրսի հետ»: Այս հարցին ի պատասխան՝ Ռ. Յակորեանը վկայակոչեց Գ. Ժ. կողմից հաստատած նոյն կանոնադրութիւնը, ըստ որի՝ Հայաստանում կուսակցութեան ղեկավար մարմիններն են Գերագոյն Ժողովը եւ Գերագոյն Մարմինը:

Գերագոյն Ժողովին ներկայացուած արձանագրութիւնների առնչութեամբ նախարարը պարզաբանեց, թէ ինչպիսի արձանագրութիւն կ'ուզենայինն ունենալ իրենք: Ըստ ամենայնի, խօսքը սղագրութեան մասին էր, սակայն պակաս յատկանշական չէ, որ նոյնիսկ այս դէպքում իրավիճակը գուցէ չփոխուէր, քանզի նախարարը կասկած յայտնեց, որ նախքան Գերագոյն Ժողով գումարելը տեղի է ունեցել մէկ այլ գաղտնի ժողով, որտեղ մշակուել է Գ. Ժ-ի անցկացման սցենարը: Սրանով, ըստ էութեան, բացայայտուեց Հ. Յ. Դ. նկատմամբ իշխանութիւնների կողմից անվստահութեան եւ կասկածանքի իրական չափ, որը փարատելու համար միակողմանի՝ քանքերը, թերեւս, ապարդիւն կ'լինեն:

Հանդիպման աւարտին կողմերը երկուստեք չփումների չարունակելու ցանկութիւն եւ պատրաստակամութիւն յայտնեցին:

•Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի քաղաքական ներկայացուցիչ եւ Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանատան պատասխանատու աշխատակիցներու միջեւ երկ տեղի ունեցած է հանդիպում: Դեսպանատան նախաձեռնութեամբ կայացած այս հանդիպումին, քննարկուած է Հ. Յ. Դ. գործունէութեան վերսկսման հարցին գծով արդարադատութեան նախարարի հետ կայացած բանակցութիւններու, «Ագգային Համաձայնութեան» Դ. Հինքի յառաջիկայ աշխատանքներուն եւ Հայաստանի ներքին քաղաքական խնդիրներուն առնչուող հարցեր:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՆՑ ԱՐՄԱՏԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԸՆԹԱՑՔԸ

Քաղաքական պատասխանատուներ յաւատեսութիւն կը յայտնեն այս հանգրուանին Լիբանանի քաղաքական ու տնտեսական ընթացքին նկատմամբ, որ կը գտնուի սահմանադրական հաստատութիւններու ճչդած ուղղութեան մէջ: Անոնք կը հաստատեն իրենց յաւատեսութիւնը, թէ մօտիկ ապագային ապրուստի պայմանները պիտի բարելաւուին չնորհիւ Ուաշինկթընի մէջ կայացած «Լիբանանի Բարեկամներու Ժողով»ին յաջող որոշումներուն:

Ինչ կը վերաբերի Լիբանանի շրջանային կացութեան, Լիբանանի բարձրաստիճան պատասխանատուները օրըստօրէ աւելի մտահոգ կը դառնան ի տես իսրայէլեան նոր հանգրուանին, որ կը կոչուի Նեթանիահուի դար:

Նախագահ Իլիաս Հերաուի մտահոգութիւն յայտնած է Իսրայէլի յարձակումներուն չարունակման մասին, որովհետեւ այդ յարձակումները կը խափանեն Լիբանանի վերաշինութեան ընթացքը: Ան վերստին բարձրաձայն յայտնած է, որ Լիբանան պատրաստ է արդար եւ մնայուն խաղաղութեան՝ համաձայն Մատրիտի խորհրդաժողովի որոշումներուն: Ան հաստատած է, որ Լիբանանը ընկճելու փորձերը պիտի չյաջողին եւ Լիբանան իր բանակցողի ընթացքը պիտի չրաժնէ Սուրիայէն:

Հերաուի իր այս կեցուածքով միացած է Նեպիհ Պըրրիի կեցուածքին, որ վերջերս վերադարձած էր Եգիպտոսէն, տեսակցութիւն ունենալէ ետք նախագահ Հիւսնի Մուպարաքի հետ: Անոնց տեղեկութիւնները կը հաստատեն, որ մեծ պատերազմ չկայ շրջանին մէջ: Սակայն անոնք գիտեն, որ Նեթանիահու եւ իր կառավարութիւնը ճնշումներ պիտի բանեցնեն Լիբանանի եւ Սուրիոյ վրայ, մեկնելով Հարաւի դարպասէն:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ վերադարձած է Ռիատէն եւ Փարիզէն յաւատես է Լիբանանի նկատմամբ յիշեալ երկու երկիրներուն գօրակցութեամբ: Ան հաստատած է, որ Ֆրանսայի եւ Սկուտական Արարիոյ համար Լիբանան առաջնահերթ մտահոգութիւններէն մէկն է, մանաւանդ այս հանգրուանին, երբ երկիրը կը չարունակէ վերաշինութեան իր ծրագիրը:

Վարչապետը, որ նաեւ մտահոգ է Հարաւի վիճակով, նախագահներ Հերաուիի եւ Պրրրիի տեղեկացուցած է Փարիզի եւ Ռիատի մէջ իր ունեցած խորհրդակցութիւններուն մասին:

Վարչապետը, որ վստահ է ներքին կացութենէն, կը քաջալերէ ներքին տնտեսական ծրագիրները: Ան լիրանանցի առեւտրականներուն առաջարկած է բարելաւել ագգային արտադրութիւնը՝ ներքին սպառումի եւ արտածումի համար, որպէսզի նաեւ բարձրանայ ապրուստի մակարդակը: Ան այս իմաստով կը պատրաստէ տրնտեսական թղթածրարները, որոնք պիտի քննարկուին յառաջիկայ Շաբաթ օր, Դամասկոսի մէջ, Լիբանան - Սուրիա համակարգումի խորհուրդի ժողովին:

Ան այս պատճառով յետաձգած է նախարարաց խորհուրդի ժողովը եւ նախագահէն խնդրած է, որ անոր փոխարէն Պաապտայի մէջ գումարուի ժողով մը՝ քննելու համար այս թղթածրարները, որպէսզի համակարգումը նպաստէ Սուրիոյ եւ Լիբանանի շահերուն:

Լիբանանի քաղաքական վիճակը եւ Հարաւի պայթուցիկ կացութիւնը խորհրդակցութեան նիւթ պիտի բլլան վարչապետին եւ սուրիացի բարձրաստիճան պատասխանատուներուն միջեւ, որովհետեւ Լիբանանի եւ Սուրիոյ ուղղուած իսրայէլեան սպառնալիքները կը հետաքրքրեն երկու երկիրները՝ ապահովութեան իմաստով:

ՆԵՊԻԼ ՆԱՒԱՍԷՐ

(«ՆԱՀԱՐ»էն)

ԿԱՐԵԼԻ ՉԷ ՅԵՏԱՁԳԵԼ...

←

տուող երկիրներուն մէջ «աղբի տագնապ» գոյութիւն չունի այսօր, եթէ այդ երկիրը անակընկալ աղէտ մը (երկրաշարժ, մրրիկ եւայլն) չէ դիմագրաւած:

Պուրճ Համուտի աղբանոցին տագնապը իրայատուկ է, անոր արագ լուծումը այդքան ալ դժուար չէ (այդ պատճառով ալ պէտք է լուծուած ըլլար ցարդ), եթէ անոր նկատմամբ ցուցաբերուի այն հոգածու մտեցումը, որուն արժանի է այս ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՏԱԳՆԱՊԸ:

Հայկական Պլոքին յայտարարած բողոքի քայլերուն միակ նպատակը՝ այդ առաջնահերթութեան մատնանշումն է եւ դարմանումին անյետաձգելիութեան ընդգծումը: Պլոքը առաջին հերթին ի'նք կը ցանկայ, որ ստիպուած չ'ըլլար մինչեւ իսկ խորհրդանշական գործադուլի քայլին դիմելու եւ երկուշաբթի քայլը ըլլայ նաեւ վերջինը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԵՀՈՄԻ ՄԷՋ

Հայց. եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ) կազմակերպութեամբ դասախօսութիւն՝

«ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱՌՈՅՑԸ»

Կը բանախօսէ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 11 Յունուար 1997, երեկոյեան ժամը 5.30ին, ՀԵՀՈՄի կեդրոնատեղիին մէջ, Անթիլիասի Մայրավանք:

ՄԱՆՍՕՐ.- Հրաւիրուած են բոլոր Հայ Համալսարանական Ուսանողները եւ Երկրորդական Վարժարաններու 12րդ դասարանի ուսանողները:

ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ ՄԱՅՐԵՆԻԻՆ

«ԹՂԹԻԿ Մ'ԱԼ ՉԵՍ ԳՐԵՐ, ՑԱՒԵՐԴ ԻՄԱՆԱՄ...»

Ձափահասներուն ծանօթ երգի մը մէկ տողն է այս, զոր վերջերս ATN-ի լանջի Օֆելիա Համբարձումեանի հրաշալի կատարողութեամբ եւ որմէ հետաւորաբար շատ բան չհասկրնայ նոր սերունդը: Բայց երգարուեստի նուիրուած նշմար մը չէ այս մէկը, այլ կ'ուզեմ երկու խօսք ըսել «բուդդ» բառին մասին:

Երէ Աստուածաշունչի Նոր Կտակարանի գլուխներուն ցանկը թերթատէ (կարծեմ ընթերցողներս կամաց-կամաց Աստուածաշունչի մասնագէտ պիտի դառնան այս ընթացքով), այնտեղ պիտի հանդիպիք *բուդդ* բառի բազմաթիւ գործածութիւններու, ինչպէս՝ *բուդդ առ հոռմմացիս, բուդդ առ կորնթացիս, բուդդ առ հիւսացիս* եւ այլն, եւ այլն: Պատարագիչ Մաշտոցին թերեւս ալ լսած է, երբ ան բարձրանայն ու պատկառազդու շեշտով մը կը յարդայ. «Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց բղխ՛յն է ընթերցուածս...»:

Ամաւ հետաւորաբար չենք գիտեր, որ այս գործածութեանց մէջ *բուդդ* բառը պարզապէս *նամակ* կը նշանակէ. երբ հինգերորդ դարուն մեր նախնիները *բուդդ* ըսէին, միայն *նամակ* կը հասկնային, որովհետեւ սկզբնապէս այս եղած է բառիս բուն նշանակութիւնը: Միւնչեւ ե՞րբ *բուդդ*-ը նամակ իմաստով գործածուեցաւ – պարզ է, միւնչեւ այն օրը, երբ բուդդը (այսինքն՝ այն թերթիկը որուն վրայ կը գրեին) մուտ գործոց Հայաստան եւ նեազիեան փոխարինեց մագաղաթը եւ մաս կազմեց մեր առօրեային. մօտաւորապէս տասներորդ դարէն սկսեալ: Որմէ եաւ հայուն բառապաշարին մէջ սկսաւ ընդհանրանալ *նամակ* բառը, որ պարզաբերէն է եւ որ եկաւ գրաւելու *բուդդ*-ին (գրութեան) տեղը, միւնչեւ որ *բուդդ* եւ *նամակ* արդի հասկացութիւնները մեր մէջ գանէին իրենց վերջնական կայունութիւնը:

Իմաստային այսպիսի փոփոխութիւնները մէկ օրէն ու համաչափ ձեւով չեն կրնար տեղի ունենալ ժողովուրդներու պատմութեան մէջ. այդպէս ալ եղած է մեր մէջ: Երկար տասներ *բուդդ* բառը հայութեան մէկ կարեւոր առօսիսի համար շարունակած է նշանակել *նամակ*, յատկապէս գաւառական շրջաններու մէջ, ուր աւանդութիւնները, սովորութիւնները, բարբերը, բայց նաեւ բառերն ալ իմաստները շատ աւելի երկար ու անվթար կ'պահին: Անոնց այդ իրողութեան մէկ արտայայտութիւնն է գաւառական այն ոչ շատ հին երգը, որուն մէջ կը գանենք *բուդդ*-ին բնիկ (իրրեւ նամակ) գործածութիւնը.

Ասում ես՝ դիմացիր, ինձո՛ր դիմանամ,
Թղթիկ մ'ալ չես գրիր, ցաւերդ իմանամ:

*
* *

Տարիներ առաջ ծանօթներէն իմացած եմ, որ Նիկոլ Աղբալեանը, – որուն կացութեան շատ նիշդ կը յարմարէին յիշեալ երգին բառերը, – իր գեղցիկ ձայնով ու մեծ ապրումով կ'երգէր գայն՝ նամայով սեղանակիցներ, յատկապէս իրր օրինակ գրնիչներ բաժակներն ալ իրենց անվրէպ ներգործութիւնը բանեցուցած բլայնի անոնց մասերուն ու հոգիներուն մէջ:

Երբեմն երեւակայութեամբ կը փորձեմ վերակազմել անոնց այդ մասերմիկ հանդիպումները: Անոնք Շանթը, կոկուած ու կոնկուած, փողկապը թծախնդրօրէն կապած, կարծես համայատրան դասախօսութիւն տալու եկած բլայ, եւ սամոնան կեղեւի վախճայով՝ համադամներուն հագիւ ծեռ կ'երկարէ ու բաժակը հաղաւարութեամբ բերանը կը տանի (կա՛մ կը խմէ, կա՛մ չի խմեր). ան իր ասիացի ուսկնդիրներուն կը պարզէ. եւրոպական մանկավարժութեան կամ բնագիտական տեսութեան մը թեմերն ծալելիքը: Համօ Օհանջանեան, իր արձանային կազմով ու արտայայտութեամբ, բառերը հատիկ – հատիկ արտասանելով կը պատմէ. Փեթրուարեան Ապստամբութեան մութ մնացած մանրամասնութիւնները կամ Հայաստանի խորհրդարանին անկրանիկ նիստին օրակարգերը կը գնկուցէ անխոնջ ու միապաղաղ ձայնով: Արշակ Յովհաննէսեանը, որ, երէ բերանը բանայ, կը պատմէ Քիւրի յուշերէն (– Քիւրում եղո՞ւ ես:– Ո՛չ, պարոն Յովհաննէսեան, ինչպէ՞ս կրնայի:– Ափսո՛ս), եւ ուրբանիւթիւնները խռովիչ աչքերն ու դեղձան մազերը կ'ոգեկոչէ երկար: Դիւզպիանը, մուրջ ու պլպտուն աչքերով, ի զուր կը փորձէ մտովի վերակազմել Կարենի անարկու բանակներուն յուսահատ գրոհները արեւմտեան կազմակերպ փաղանգներուն դէմ (– երէ մնայի ուենալիքի ներանց կազմակերպուածութիւնը...): Կարօ Սասունին, ուշացած, յամբաձայլ կը ժամանէ ծխամորնը մարելով ու յաղթ հասակի իւիճագոն փարթեով կաղացող ոտքերուն վրայ (ինչպէ՞ս կարելի է առանց իրեն՝ Շնորհի նախկին գաւառապետին, գիտի խմել). կը նկատէ Դիւզպիանը (մանի՞ր, բէ՞ չմանի) ու կ'երթայ տեղ գրաւելու որման կարելի է աւելի հեռու: Ուրիշ ովքե՞ր... չեմ գիտեր: Անա նաեւ Նիկոլ Աղբալեանը, մանրակազմ, արեւելեան տերվիշի արտաքինով, մտովի բանաստեր, հոգիով գաւառացի աշուղ, որ, աւելորդ մը ծուարած, կարծես կ'ամչնայ տեղ գրաւելու, այս Պառնասին մէջ օտար մը, որուն հոգին կը թեւածէ Հայաստանի լեռներուն ու հովիտներու վերեւ, հայ գեղջուկին ու շինականին երգին ուենկնդիր, մերթ Հալաբարի փողոցներուն մէջ, մերթ Նարեկով վանէին խորհուրդներուն անձնատուր: Կը մտածէ կեանքին ալ մասին, զոր չէ կրցած իրագործել այնպէս, ինչպէս իւիճ կը ցանկար. սուրը չէ ձգած, որ երգիչ դառնայ, գրիչը չէ ձգած, որ մարդկի դառնայ: Ամուսին ու հայր ալ չէ կրցած ըլլալ. հագիւ բանի մը տարուան ամուսնացած՝ սպիտակած եղած է լինի կինն ու երեք զաւակները: Վերջին անգամ,– ե՞րբ, բաո՞ն, բէ՞ բանիներկ տարի առաջ,– տեսած է զանոնք Թաւրիզի մէջ, երբ արդէն պանդուխտ էր: (– Ես կը մնամ Լանդ, դուք վերադարձէք Հայաստան. իմ զաւակները պէտք է հայրենի հողի վրայ հասակ բաշին): Կարօան, տասնամեակներու կարօան դարձեալ կը պարուրէ գինքն. աչքերը կը մթագնին պահ մը, ան չի լսեր, մտիկ չ'ըներ, չի նեռներ շուրջինները: Յուզումէ ալիք-ալիք կը բարձրանայ վիր, դէպի վիր ու կը խեղդէ գինքն: Ան վերջին բաան ալ ցմրուր կը խմէ ու կոկորդը մարելով կը սկսի մեղմ ու իւիճամոռաց երգել իր սրտին այնքան հարազատ երգը, իր երգը.

Ասում ես՝ մոռացիր, ինձո՛ր մոռանամ,
Թղթիկ մ'ալ չես գրիր, ցաւերդ իմանամ:

ՏՈՔԹ. ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՆՇՈՒՄ ՊԱՆՔՈՔԻ ՄԷՋ

Պանքոքի մօտ Լիբանանի դեսպան ընկ. Վահէ Նիւրբէթեան վերջերս «Ազդակ»-ի խմբագրութեան յղած է թղթածրար մը, որ կը բովանդակէ Լիբանանի Անկախութեան 53րդ տարեդարձին առիթով դեսպանատան կազմակերպած ընդունելութեան եւ Լիբանանի ի նպաստ տեղեկատուական աշխատանքին մասնակցութիւնները:

22 Նոյեմբերին՝ Անկախութեան տօնին օրը, Պանքոքի «Շանկրիլա» պանդոկին մէջ կազմուեցաւ քաղաքական, դիւանագիտական, մտաւորականներ եւ գործատէրեր: Ներկայ եղած են նաեւ թայլէնտաբնակ լիբանանցիներ:

Հանդիսութեան ներկայ եղած են յատկապէս Թայլէնտի թագաւորին խորհրդականը՝ Միտհի Մաւեթսիլա, արտաքին գործոց նախարարի ներկայացուցիչի հանգամանքով՝ փրոթոգոլի պետը եւ նախարարութեան մէջ ասիական եւ ափրիկեան բաժանմունքներու վարիչր:



«Շանկրիլա» պանդոկի ընդունելութեան ներկայ անձնաւորութիւններէն - (ձախէն աջ)՝ Լուիճի Պրեսըն արք. (պապական նուիրակ), Աւստրիոյ դեսպան Նիկողայոս Շէրք, փրոթոգոլի տնօրէն Սունայ Պունիասիրաֆանթ, նախագահի խորհրդական Սիտհի Սաւեթսիլա, դեսպան ընկ. Վ. Նիւրբէթեան, դեսպան Ֆումֆոլ Թեւիթ, Միջին Արեւելքի բաժինի պատասխանատու Վոնկթիվա Սուրափոլպհիշէթ եւ Ֆրանսայի դեսպան Ժերար Քոսթ:

Լիբանանի դրօշով եւ քարտէսով բացուող էջին խորագիրն է «Լիբանան 96, Անկախութեան 53րդ Տարեդարձ»: Անգիկա կը բովանդակէ 9 խորագիրներու տակ ամփոփուած նիւթեր: Առաջին ճակատին հրատարակուած է նախագահ Հերաուիի պատգամը, իսկ Ռ. ճակատը՝ դեսպանին խօսքը: Միւս նիւթերը հակիրճ բայց ըստ բաւականին ամբողջական տեղեկութիւններ կը բովանդակեն Լիբանանի վերականգնման, շուկայական տնտեսութեան, արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, զբօսաշրջիկութեան մարզին ընձեռած կարելիութիւններուն մասին:

Նշենք, որ «Պանքոք Փոսթ» թերթին 13րդ էջին վրայ կ'երեւին 5 ծանուցումներ, որոնց մէջ 5 հաստատութիւններ կը շնորհաւորեն Լիբանանի Անկախութեան տօնը:



«Փոսթ»ի էջը, նուիրուած՝ Լիբանանի

Անգիկա կը բովանդակէ 9 խորագիրներու տակ ամփոփուած նիւթեր: Առաջին ճակատին հրատարակուած է նախագահ Հերաուիի պատգամը, իսկ Ռ. ճակատը՝ դեսպանին խօսքը: Միւս նիւթերը հակիրճ բայց ըստ բաւականին ամբողջական տեղեկութիւններ կը բովանդակեն Լիբանանի վերականգնման, շուկայական տնտեսութեան, արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, զբօսաշրջիկութեան մարզին ընձեռած կարելիութիւններուն մասին:

Նշենք, որ «Պանքոք Փոսթ» թերթին 13րդ էջին վրայ կ'երեւին 5 ծանուցումներ, որոնց մէջ 5 հաստատութիւններ կը շնորհաւորեն Լիբանանի Անկախութեան տօնը:

ԱՌՆԷՏԻ ՏԱՐԻՆ ԱՒԱՐՏՈՒԵՑ ՆԱԵՒ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Տարուայ հաշուետուութիւնը այս բնագաւառում հաւանաբար պիտի փորձէին տալ Վերագոյն Դատարանի նախագահը եւ հանրապետութեան գլխաւոր դատախազը: Թէկուզ մէկ մամուլի ասուլիսում: Սակայն ո՞վ է յիշում, թէ վերջին անգամ, երբ են նրանք հանդիպել լրագրողների հետ: Ասենք, գուցէ դրա կարծիքը չկա՞ր: Դատարաններում, հաւանաբար գոհում էին նրանք, հրապարակայնութեան անսխալ մթնոլորտն ապահովել է՞ եւ ինչու ոչ՝ «իրենց» շնորհի՞ւ... Այդուհանդերձ ինչպիսի՞ն եղաւ Առնէտի տարին հանրապետութեան դատարաններում, ինչպիսի՞ գործեր քննութեան առնուեցին, ի՞նչ դատընթացների մենք մասնակցեցինք...

Հանրապետութեան Վերագոյն Դատարանում տարին, թերեւս, սկսուեց «Հայաստան» Կոոպերատիւների Միութեան նախագահ «Աշոտ Աբրահամեանի եւ 12 ամբաստանեալների գործի» աւարտով, որին յաջորդեց «Արմենիա» դրամատան եւ մնացեալ դրամատունների գործի դատաքննութիւնները: Դատախազութեան վարոյթում մի սպանութեան գործ այդպէս էլ մնաց չբացայայտուած. «Արմենիահիւրանոցային համալիրի փոխ տնօրէն Սօսէ Խաչատրեանի: Վերագոյն Դատարանի վրայ «մնացած» գործերից է Սպանդարեանի շրջանի Ն. Գ. քրէական հետախուզութեան բաժանմունքի նախկին աշխատակիցներ Արթուր Աթարբէկեանի եւ Մամուէլ Ջաղինեանի դէմ յարուցուած քրէական գործը: Այս գործով զբաղուեցին եւս մի քանի դատաւորներ (թուով 7): Ու յայտնի չէ, թէ էլի ովքեր կը զբաղուեն: Արաբկիրի շրջանի ժողովրդային դատարանում ոչ պակաս ծանր էր պաշտպանութեան նախարարութեան զօրամասի սպայ Սմբատ Մարգարեանի նկատմամբ յարուցուած քրէական գործի դատաքննութիւնը: Նրա դատակարութեան հետեւանքով կեանքից զրկուել էր «Արաբկիր» երկրապահ ջոկատի զօրամարտիկ Ռոմէօ Թամամեանը: Ինչի եւ Արթիկի շրջանների ժողովրդային դատարաններում լսուեց գինեկոլոգ Սմբատ Անդիկեանի գործը:

Հասարակական ուշադրութեան կեդրոնում գտնուեցին «Դօ-ի, «Վահան Յովհաննիսեան – 30»-ի գործերը, որոնք «Դաշնակցական գործ» անունը ստացան: Ոչ պակաս ծանր էր աշխարհի ախոյեան «Ռենուր Փաշայեանի գործը», որի դատավճիռը կայացրեց օրերս Ծէնգաւիթի շրջանի ժողովրդային դատարանը:

Այս գործերին զուգընթաց շարունակուեցին եւ աւարտուեցին ստեղծագործական միութիւնների՝ Հայաստանի Դրողների Միութեան, նրա Քարոզչական Խորհրդի, «Արուեստ» ամսագրի, «Գոյակ» Մշակութային Զարգացման Դործարարական Ընկերակցութեան, Թատերական Դործիչների Միութեան տարածքային վէճերը...

Դատարաններում արժանապատուութեան եւ պատուի հայցեր ներկայացրին «Այժմ» թերթի դէմ՝ Կ.Ք.Յ.Հ. ոատիոնըներութեան «Երեւան» ծրագրի դէմ... թիւ 6 հացի գործարանը: Ռուհական «առօրեան» եւս անմասն չմնաց: Ոչ պակաս աղմկալի էր, մասնաւորապէս, կեանսաբանութեան ընդունելութեան քննութիւնների յանձնաժողովի նախագահի նկատմամբ յարուցուած քրէական գործի դատաքննութիւնը: Ժրդ իշխանութեան ուշադրութիւնը Ապրիլի 23ից սկսած մէկ ամիս գրաւուեց յատկապէս Հ.Ի.Ա.Կ - Ռ.Ա.Կ- «Ի.Ա.Կ ներկայացուցչութիւն» հասարակական կազմակերպութեան «շնորհի» «Ազգ» թերթի պատկանելութեան հարցի շուրջ ծաւալուած դատարանական վէճը:

Ծէնգաւիթի շրջանի ժողովրդային դատարանում աւարտուեց ժողովրդային դատարանի նախկին նախագահ Եուրա Վազարեանի դատավարութիւնը, որը մեղադրւում էր կաշառակերութեան մէջ: Իսկ մինչ մոսկովեան դատարաններից մէկում պատրաստւում էր մեր հայրենակից Սերժ Ջիլաւեանի գործը, մեզանում սկսուեցին նախագահական եւ «ՏԻՄ» ընտրութիւնները, որոնցից մի քանիսի արդիւնքների «ամփոփումը» տեղափոխուեց մի դէպքում՝ Մահմանադրական Դատարան, եւ այնու՝ կենտրոնի, Էրեբունու, Նոր Նորքի, Նորք Մարաշի տարածքային դատարաններ:

Մենք, հաւանաբար, սխալուած չենք լինի, որ նշենք, թէ Վերագոյն Դատարանի աշխատանքային տարին Դեկտեմբերի 26ին աւարտուեց եւս ոչ պակաս հետաքրքիր «բժիշկների գործով»՝ Նուպարաշէնի հոգեբուժական հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Սամուէլ Թորոսեանի եւ 6 բժիշկների: Այն սկսուեց Նոյեմբերի 12ին: Հիպոկրատի երկայացուցիչները մեղադրւում են կաշառակերութեան, գինամթերք պահելու, դեղերի անօրինական վաճառքի համար: Գ.Դ.ում սոյն քրէական գործն ուղարկուեց լրացուցիչ նախաքննութեան... (5 բժիշկների մասով): Անհասկանալի մնաց, թէ ինչու այս տարի չսկսուեց եւ չաւարտուեց «Դրոյի քոյր - գործը»՝ «Իմանալ - չյայտնողների», ինչպէս անուանւում են: Հետաքրքիր է, թէ ի՞նչ պիտի յայտնեն դատարանին այս մեղադրանքով 2 տարի ձերբակալուածները, երբ «մայր գործով» դատաքննութիւնն աւարտուած է... Նոյնն մի «աղմկալից» գործ, երբ դատապարտուեցին ազատազրկման արդարադատութեան նախարարութեան քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման վարչութեան 3 աշխատակիցներ... Ու մեղաւորիս վերջին խօսքն այս տարուայ այս տխուր հաշուետուութիւնն է:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿԻՆ՝ ՄԱ՞Հ, ԿԱՄ ԲԱՅԷՔ ՋԵՐ ԱՉՔԵՐԸ

Ստորեւ տրուած յօդուածը մեկնաբանութիւններու չի կարօտիր: Սակայն պէտք է նշել, որ օրէ օր աճող աղքատութեան ահաւոր արդիւնքներուն ի տես այսօրուան իշխանութիւնները կը վարեն ջայլամի քաղաքականութիւն:

Տաք, արեւոտ եղանակ է Երեւանում: Այնքան տաք, որ մի կարճ պահ մարդիկ ասես մոռացել են Նոյեմբերի առաջին ցրտաշունչ տասնօրեակը երբ փողոցները միանգամից լցուեցին մրսած դէմքերով, վերարկուներով, իսկ հայաստանեան կեանքում արձանագրուեց մի տիուր վիճակագրութիւն. Երեւանում, Վանաձորում եւ Արմաւիրում՝ փողոցում, պատի տակ, կիսակառոյցում գտնուեցին երեք թափառաշրջիկների դիակներ: Պարզապէս ցրտին չդիմացած հիւծուած մարդկանց մարմիններ՝ իրաւաբանօրէն ասած՝ առանց արտաքին բռնութեան նշանների:

Ռատիոն, հեռուստատեսութիւնը, մամուլն ու պարզապէս մեր առօրեան քիչ - քիչ մեզ վարժեցրել էին «մուրացիկ», «թափառաշրջիկ» հասկացութիւնների՝ իբրեւ արդի հայկական կեանքի անկապտելի յատկանիշների: Սակայն ընդունենք, որ մարդիկ պատրաստ չէին այս նոր երեւոյթին, որ կեանքը փողոցում անցկացնող մարդը, ի վերջոյ, դատապարտուած է, քանզի անիրաւ է դիմանալ, երբ քաղցի եւ մերկութեան հետ միացած՝ նրա վրայ գրոհում է նաեւ ցուրտը: Դիակներից մէկը յայտնաբերուել էր մայրաքաղաքում «Լամպատա» կոչուող կամրջի տակ, անցորդների համար իբրեւ պէտքարան ծառայող մի կիսատ շինութեան ներսում: Անհաւորման: 46ամեայ Լ.Գ.ն հարբեցող էր, անտուն, անգործ: Լաւ, խիղճերս հանգստացնելու համար փորձենք ինքներս մեզ համոզել, թէ ալքոլամոլիմէկն էր, իմել - քնել էր դրսում, այդ գիշեր էլ նակառակի պէս ձմրան ցուրտ էր, բա պիտի սառչէր... Լաւ փաստարկներ են, գրեթէ համոզիչ, եթէ անտեսենք, որ հանգուցեալը տարիներ առաջ գործարաններից մէկի լաւ բանուորներից էր, ընտանիք, տուն ունէր եւ, որ այսօր նրա նախկին հարեւանները սրտի ցաւով գլուխ են օրօրում. «Ափսոս, ի՞նչ լաւ տղայ էր»:

Թերեւս կարելի լիներ ընդունել այս ինքնախաբէութիւնը, եւ դրանով «հարցը փակուած համարել»: Սակայն, ցաւօք, հարբեցող չէին ցրտի եւ սովի միւս երկու զոհերը, աւելին՝ նրանցից մէկը... 65ամեայ կին էր: *Մեթրո*: Մուրում է պառաւ մի կին: Հանրախանութ: Մուրում է դողդոջուն մի ծերունի (ես ինքս ինձ համոզում եմ, թէ նա ամենեւին նման չէ Կոնան Դոյլի յայտնի կեղծ մուրացիկին):

Տօնավաճառ: Մուրացկանները իմբով են՝ երիտասարդ մայրն ու իր չորս փոքրիկները: Ստորգետնեայ անցում: Ծանր այրուածքի հետքերով մի պատանի: Շուկայ: «Փախստական» տարեց կանայք: Դարավերջի երեւանեան համայնապատկեր: Աբովեան փողոց: Կեսօր: Դեռ հեռուից լսւում է ջութակի հեկեկանքը՝ Սեն Սաենս: Համակրելի երիտասարդ է, կողքին՝ ջութակի բաց պատեանը՝ մի քանի մանր դրամով:- Ուրիշ հնար չունե՞ք վաստակելու: - Մի հիմնարկում պահակ եմ: Քաղաքից բացակայել չեմ կարող՝ կինս հիւանդ է, երեխաները՝ փոքր: Ինժեների մասնագիտութիւնս պէտք չի գալիս, յիշեցիներն, փոշոտուած ջութակս... - Երեխաները գիտեն: - Գիտեն: - Ինչպէ՞ս են ձեզ դիմաւորում երեկոյեան: Ի՞նչ էք պատասխանում նրանց հարցերին: - Ուրիշ ելք չկայ: Փոքր են, բայց հասկանում են:

Ծանր է խօսում, ակամայ, ամէն բառն արճճի ծանրութեամբ ընկնում է հոգուդ մէջ: Արժանապատուութեան ոտնահարման ու ստորացման մի անհաւասար պատժարան Աբովեան փողոց: Եւ քառապատիկ անհաւար, եթէ ջանել ես, բայց՝ անզօր: Կարմիր Խաչի քաղաքային կոմիտէում ոտք դնելու տեղ չկայ: Կենսաթոշակառուները ուղղակի գրոհում են կոմիտէն: Նրանց չես մեղադրի, այս մրսած ու սոված հոգիները լոյսի մի փոքրիկ շող է յայտնուել. գերմանացի բարեգործ Կերհարդ Մայերը ճաշարան է բացել Երեւանում: Թէկուզ ընդամէնը չորս ամսով, բայցեւայնպէս օրական գոնէ մի անգամ տաք ճաշի հեռանկար է յայտնուել: Եւ նրանք գալիս են՝ գետնահակ, ցնցոտիաւոր, դողդոջուն ձեռքերով, կերկերուն ձայներով... Նրանցից մէկի՝ 93ամեայ պրոֆեսոր Մամիկոն Դաւթեանի քրքրուած կօշիկներին նայելիս հարցս առնում է կոկորդումս:

Կոմիտէի նախագահ Լ. Բաբաջանեանն անզօր ձեռքերն է տարածում: Թեեւ իրաքանչիւր այցելուի համար մի ջերմ ժպիտ, մի յուսադրող խօսք ունի պահած, սակայն ժպիտով ու խօսքով ո՞ւմ կը կերակրես, երբ Մայերի ճաշարանն ընդամէնը 200 հոգու համար է, իսկ մայրաքաղաքի միայն Կենտրոն շրջանի կարիքաւոր ծերերը 4000ից աւելի են: Դա՝ միայն կենսաթոշակառուները: Իսկ կոմիտէի խնամառու հաշմանդամ եւ որբ երեխաները, ուսանողները, անոտ, անձեռ կոյր... Ո՞ւմ վրայ է Կոմիտէի յոյսը, երբ պարզ է, որ անդրծովեան «բարի քեռիների» մանր-մունր բարեգործութիւններով այդ ընկերային աղաւաղուած պատկերը դոյզն իսկ չէր շտկուի:

- Դիմելու ենք ընկերային հարցերու նախարարութիւն: Նոր նախարարը կին է, սըրտին աւելի մօտիկ կ՚ընդունի վիճակը, յատկացումներ կ՚անի, ծրագրեր կը նախանշի: Նայէք այս թշուառներին: Ինչո՞վ են մեղաւոր նրանք, որ ծեր են, սոված, տկլոր: Չէ՞ որ տասնամեակներ առաջ նրանցից ամէն մէկը պիտանի է եղել՝ բուժել է, սովորեցրել, կառուցել... կամ երեխաները: Փոքրիկ Կարէնի ձեռքին արհեստական դաստակ էր պէտք դնել: Առողջ ձեռքից բռնած՝ տասնեակ դռներ թակեցինք: Ի զուր՝ ոչ ոք չարձագանգեց: Յուզմունքից խեղճ երեխայի արհեստական աչքը հենց այստեղ ընկաւ յատակին, մարդկանց աչքերի տակ:

Կոմիտէում մեծ յոյսեր են կապում նաեւ նոր քաղաքապետի հետ. գործարար մարդ է, պիտի որ գոնէ քաղաքում միջոցներ ձեռնարկի այս թշուառութեանը վերջ տալու համար: Իսկ թշուառութիւնն այդ բազմաբնոյթ է, բազմադեր՝ տաք հագուստ, վառելիք, դեղորայք, սնունդ... Յուսանք մենք էլ: Որ տիկին Լարիսայի ջանքերը չեն մնայ սոսկ իբրեւ «ձայն բարբառոյ յանապատի» եւ, որ նրա սրտի երկու տագնապները այս ձմեռ չեն երրորդուի:

Վերջին հեռուստահաղորդումներից մէկում, երբ լրագրողուհին խօսում էր հանրապետութեան բնակչութեան եկամտի «զգալի աճի» մասին, օպերատորական տեսախցիկը յամառօրէն գամուել էր մայթեզրին նստած մուրացիկ կնոջ վրայ, անցորդներից մէկը նրան 10 դրամանոց էր երկարել, եւ նա ձեռքը կարկառել էր՝ «եկամուտը» ստանալու: Ի՞նչ էր դա՝ պատահականութի՞ւն, լրագրողի հեգնա՞նք, թէ վշտի ծիծաղ: Դժուար է ասել: Ինչպէս դժուար է հասկանալ, թէ ինչո՞ւ են նրանք փողոցում նոյնիսկ սառնամանիքին, երբ մարդիկ, որ պիտի ողորման, ցրտից թաքնուած են «եօթ դրան հետեւում»: Կամ ի՞նչն է նրանց համար ամենասարսափելին, եւ ինչո՞ւ է իմ փոքառու հարեւանը շարունակ կրկնում. «Հարուստները վախենում են մեռնել, իսկ աղքատները՝ ապրել»: Եւ վերջապէս, ինչո՞ւ է, որ մենք ամէն օր տեսնում ու չենք տեսնում նրանց:

Կինոթատրոն «Այրարատ»: Կարճ՝ «Ռասիա»: Տնօրինութեան եւ ոստիկանութեան համատեղ ջանքերով նրա տանիքը ձմրան դէմին «ազատուեց» այստեղ գիշերող անապաստան երեխաներից: Բայց արդեօք պաշտպանական երկաթածողը ի սպառ լուծե՞ց նրանց խնդիրը: Ո՞ւր է այն հասարակական հիմնարկը, որն իրրեւ լուրջ հիմնաքարց կը դիտի անապաստան հայ երեխաների գոյութիւնը, կը զբաղուի նրանց ճակատագրով: Եւ ո՞վ կ՚երաշխաւորի, որ ձմրան մի դաժան առաւօտ մենք սառած մանկական դիակներ չենք գտնելու մեր պատերի տակ: Մուրացիկներ: Զառամեալներ: Հաշմանդամներ: Լքուածներ: Երեւանեան համայնապատկեր՝ քսաներորդ դարավերջին: Մեր անտակ հոգու տէր, մեր բարերար ու ասպնջական ժողովրդի աչքի առաջ: Իսկ մենք, որ այսօր անզօրենք փրկութեան որեւէ ելք գտնել մեր ազգային նկարագիրն արատաւորող այս ողորմելի վիճակից, շարունակում ենք տիեզերքով մէկ յոխորտալ այդ նոյն ազգի դարաւոր մշակոյթով, անկրկնելի արուեստով ու պատմութեամբ, ազգն աշխարհին ներկայացնող մեր դիւանագէտ այրերի բանակով, գիտուններով... Փուչ սնապարծութի՞ւն՝ թշուառութեան բազում օրինակներով օրըստօրէ հարստացող մեր վաւերագիր-կեանքում: Աբովեան փողոց: Երեկոյ: Ջութակը դեռ Սեն Սաենս է հեկեկում: Ես աշխատում եմ աննկատ անցնել այդ մայթով:

ԶԱՐՄԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ

«ԴՐՕՇԱԿ»

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1997Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

15 Յունուարին լոյս կը տեսնէ «Դրօշակ»ի 1997 տարեշրջանի առաջին համարը: Նոր բաժանորդ արձանագրուելու փափաք ունեցող ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք, որ «Դրօշակ»ի տարեկան բաժնեգինը 80 ամ. տոլար է կանխիկ (*). Նատավաճառը՝ 5000 լիբանանեան թղթոսկի է:

«Դրօշակ» կը հրատարակուի երկշաբաթեայ կանոնաւորութեամբ՝ տարին 25 թիւ: Բաժանորդ արձանագրուելու համար, ընթերցողները կրնան ամբողջացնել բաժանորդագրութեան այս կտրօնը եւ զայն անձամբ յանձնել «Դրօշակ»ի վարչութեան (Շաղզոյեան Կեդրոն, Պուրճ Համուտ, Դրդ յարկ) եւ կամ փոստով (**) ուղարկել:

NAME:.....
ADDRESS:.....
.....
.....

*)Կարելի է բաժանորդագինը վճարել նաեւ չէքով՝ ուղղուած TROCHAG անունին:

**) «Դրօշակ»ի փոստարկղին հասցէն է
TROCHAG
P. O. BOX 80-896
BOURJ-HAMOUD
LEBANON

Հեռապատճէն (FAX)՝ 583128: Հեռաձայն՝ 587102:

Հ. ՍԱՍՈՒՆԵԱՆԻ
ՆՈՐ ՀԱՍՑԷՆ

HAMPIG SASSOUNIAN C-88440
California Correctional Institution
Unit IV-B 4-A-104
P.O.Box 1906
Tehachapi, CA. 93581,U.S.A.

գրականութիւն եւ մշակոյթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԱԹԻՔԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ 30 ՏԱՐԵԿԱՆ

Նոյեմբեր 1967ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ բացումը երիտասարդական ուժերով նոր՝ Տրամաթիքական Թատրոնին, հիմնադրութեամբ նշանաւոր բեմադրիչ Հրաչեայ Ղափլանեանի:

Տրամաթիքական Թատրոնը ամբողջ 30 տարի յաջողեցաւ հմայել մշակութասէր խաւը՝ Հայաստանի մէջ թէ անոր սահմաններէն դուրս, միաժամանակ ի յայտ բերելով երիտասարդական թարմ ուժեր, որոնցմէ շատեր այսօր կարկառուն դէմքեր են հայ բեմական արուեստին մէջ, ինչպէս՝ Վիոլետա Գէորգեան, Լեւոն Թունխիկեան, Անահիտ Թոփչեան, Արթուր Ութմազեան եւ այլն:

Օրին Տրամաթիքական Թատրոնը նկատուած էր նոր ժամանակներու հայ թատրոնի յաղթանակներէն մէկը, որ կը լրացնէ թատերական արուեստի յաջողութեան հիմնական պայմանները՝ պարզութիւն, նպատակասլաքութիւն, սեփական խաղացանկ, համարձակութիւն, հետաքրքրական մտայղացումներ, այժմէական հարցերու ներկայացում եւ բեմ-հանդիսատես ջերմ կապի ստեղծում:

Թատրոնին երեսնամեակի նախօրեակին հայրենի մամուլը կատարած է հարցազրոյց մը այժմու բեմադրիչ Արմէն Խանդիկեանի հետ, որ հետաքրքրական մանրամասնութիւններ կը փոխանցէ Հայաստանի թատերական կեանքին եւ յատկապէս Տրամաթիքական Թատրոնի անցեալի նուաճումներուն եւ ապագայ ծրագիրներուն մասին:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԵՐԵՒԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԲԵՄԱԴՐԻՉ ԱՐՄԷՆ ԽԱՆԴԻԿԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՑՈՒՄ.- Ինչպէ՞ս եւ ո՞ր թուականին հիմնադրուեցաւ Տրամաթիքական Թատրոնը:

*ՊԱՏԱՍԽԱՆ.- Ես Թատրոն եկայ 1969ին՝ իբրեւ դերասան, յետոյ դարձայ ռեժիսորի ասիստենտ, յետոյ երկրորդ ռեժիսոր, յետոյ ինքնուրոյն բեմադրիչ: Թատրոնը իր հիմնադրութեան առաջին տարիներուն ունեցաւ շատ տաղանդաւոր դերասաններ, որոնք մեծ դեր խաղացին թատրոնի կազմաւորման գործին մէջ: Անոնցմէ շատեր արդէն հեռացած էին թատրոնէն, երբ ես եկայ: Անոնք ստեղծագործական ինքնուրոյն անհատականութիւններ էին, որոնք իրենց ուրոյն ոճը, ներկայացման իրենց ձեւը, իրենց ներկայացման ձեւերը ստեղծած էին: Ես ուզեցի ունենալ իմ դերասանները, որոնք ինծի հետ միասին ստեղծագործական նոր ոճ մը, նոր ձեւեր մը, նոր ներկայացման ձեւեր մը պիտի ստեղծէ

Կնոջական

ՀԱՆԳԻՍՏ ԳԻՇԵՐ ՄԸ ԱՆՑԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պենթպրուի, որ գիշերաւան ըուներ մեզ կազդուրելու համար է. բայց հակառակին պէս կը պատահի, որովհետեւ առաջ մը կրնաւ արթնալ յոգնած ու անուրախ, բանի որ փորձկոտ գիշեր մը անցուցած ենք...

Քունը խանգարող ազդակները շատ են. ըուներն մէջ խօսակցութիւն, ակառներու կրնաց, ցնցումներ, վախզդու երազներ, գիշերաշրջութիւն եւ այլն, եւ այլն... Ի՞նչ բնել նման պարագաներու՝ հանգիստ գիշեր մը անցրնելու համար:

Ա - ԱԿՌԱՆԵՐՈՒ ԿՐՃՏՈՑ

Ասիկա շատ անհանոյ բան մրն է ոչ թէ ակռաները կրնատացնողին, այլ անոր հովը ընացողին համար:



Ատամնաբուժներու կարծիքով, այս սովորութիւնը կանխահասօրէն կը մաշեցնէ մեր ակռաները:

ԴԱՐՄԱՆ.– Տակաւին ոչ մէկ դարման գտնուած է, բացի անկէ, որ դեղարաններու մէջ կը ծախուին ակռաները պաշտպանող կերպրնիկէ շապիկներ, որոնք ակռաներուն վրայ կ'անցնին ատամնաշարի մը ձեւով եւ կ'արգիլեն թէ՛ ակռաներուն իրարու հետ շփումը եւ թէ անոր հետեւանքով յառաջացող անհանոյ ձայները:

Բ - ԵՐԵԽԱՆԵՐՈՒՆ ՍԱՐՍԱՓԸ

Եթէ ձեր մանուկը գիշերները կ'արթնայ ու մէկ ձայնով սարսափահար կը նչայ, մի՛ կարծէք, որ ան մղձաւանջ մը կրած է: Այս պզտիկները շատ յաճախ կ'արթնանան ու կը նստին իրենց անկողնին մէջ, աչերը՝ բաց, սակայն իսկապէս չեն իրենց ծնողը ճանչնար: Այս վիճակէն պէտք չէ մտահոգուիլ, բանի որ անցողական է:

ԴԱՐՄԱՆ.– Երբ պզտիկը սարսափահար նստի իր անկողնին մէջ, մի՛ փորձէք արթնցնել ու հարցուփորձ ել ընել, այլ օգնեցէք, որ վերստին ննջակայ հանգրուացնող խօսքերով ընել մխիթարելով:

Գ - ՎԱՅՐԱԳ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Շատեր իրենց ըուներն մէջ վայրագ շարժուձեր կը կատարեն՝ աջ ու ձախ հարուածներ տալով եւ կամ իրենէ իրենց վրայ թաւալելով: Երբ այս երեւոյթը պատահական է, մտահոգիչ չէ. բայց յաճախ կրկնելու պարագային՝ դարմանումի կը կարօտի:

ԴԱՐՄԱՆ.– Տակաւին մօտիկ անցեալին բժիշկները այսպիսիները կը պահէին ամբողջական հանգիստի մը մէջ, որպէսզի անոնց ամբողջ ուշադրութիւնը կեդրոնանայ ինքնասպանութեան միտումներուն վրայ:

Այսօր գիտենք, որ այս վարմունքը ոչ միայն անարդիւնաւէտ է, այլեւ կրնայ ինքնասպանութեան միտումները աւելի ուժեղացնել:

Ներկայիս կը նախընտրենք հիւանդը ընտանեկան միջավայրին մէջ պահել, ուր ան կրնայ ստանալ անհրաժեշտ սէրն ու ուշադրութիւնը:

Դ - ՇՓՈԹԱՀԱՐ ՋԱՐԹՆՈՒՄ ՄԸ

Շատեր հանգիստ գիշեր մը բոլորելով հանդերձ, կ'արթննան շփոթահար, առանց գիտնալու, թէ ո՛ւր են. այսպիսիները նաեւ մէկ քանի վայրկեան կ'անհանգստանան, մինչեւ որ իրենց շուրջինները կը մտաւոգեն իրենց այս կորսուած վիճակին պատճառով:



ԴԱՐՄԱՆ.– Ասիկա յաճախ ժառանգական է, բայց ընաբեր դեղերու հանդարտացուցիչները եւս այս վիճակին կը մատնեն ենթական: Հետեւաբար առաջին ներքին պէտք է նրաժարիլ անոնցմէ:

Ե - ԳԻՇԵՐԱՅԻՆ ՇԱՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Շատեր գիշերը իրենց ըուներն մէջ կը խօսին, բայց անոնց մարմնէն կը պակսին կարգ մը հանելիւթիներ...



Ամենայայտնի պատճառը, երբ պրկուած պատահի, պէտք է որ ոտքին մատներ ամբողջ ուժով հատակ ուղղութեամբ (տակնուդէպի երես) երթ. բանի մը երկվայրկեանէն ցաւը կ'անհետանայ:

Զ - ԳԻՇԵՐԱՅԻՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԸ

Բոլորիս ալ կը պատահի, որ գիշերը մեր ըուներն մէջ ցնցուիլ ու զարթնելի նման մեր անկողնին մէջ ցատկենք:



Ատամնաբուժներու կարծիքով, այս սովորութիւնը կանխահասօրէն կը մաշեցնէ մեր ակռաները:

ԴԱՐՄԱՆ.– Տակաւին ոչ մէկ դարման գտնուած է, բացի անկէ, որ դեղարաններու մէջ կը ծախուին ակռաները պաշտպանող կերպրնիկէ շապիկներ, որոնք ակռաներուն վրայ կ'անցնին ատամնաշարի մը ձեւով եւ կ'արգիլեն թէ՛ ակռաներուն իրարու հետ շփումը եւ թէ անոր հետեւանքով յառաջացող անհանոյ ձայները:

Է - ՄԿԱՆԱՑԻՆ ՊՐԿՈՒՄՆԵՐԸ

Այս պրկումները (*բրամփ*) կը պատահին ըուներն մէջ եւ ընդհանրապէս առաւօտեան մօտ. անոնք անհանգիստ ցաւ կը պատճառեն եւ կը խանգարեն մեր ըուները:

ԴԱՐՄԱՆ.– Այս պրկումներուն պատճառները այլազան են. առաջին հետեւական պատճառը հորմոններու չափազանցութիւնն է կիներու մօտ, որոնք յղութեան մէկ քանի ամիսներուն ընթացքին կրնան արգիլող դեղահատ կը գործածեն կամ *մինոփոզը* կը դարմանեն: Հետեւաբար անոնց կ'իյնայ բժիշկը տեղեկացնել, որպէսզի անհրաժեշտ փոփոխութիւնները կատարէ: Երկրորդ պատճառը, *մակնեզիումի* պակասը կրնայ ըլլալ եւ յատկապէս *մակնեզիումով* կարելի կ'ըլլայ դարմանել զայն: Վերջապէս, կարգ մը մարզիկներ, որոնք բաւարար ջուր չեն խմեր, կրնան նմանապրկումներ ունենալ, բանի որ իրենց արեան մէջ պատուղները պարզապէս իրենց երազին պահուն իսկ արթնցողներ են:






ԴԱՐՄԱՆ.– Մտահոգիչ ոչինչ կայ. պէտք է մեր ժամանակը առնենք եւ սպասենք, որ լաւագոյն արթնցնողներ ենք, ապա փորձենք անկողնին ել:

Թ - ԻՆՉ ԴԻՐՔՈՎ ՔՆԱՆԱԼ

Հանգիստ գիշեր մը անցրնելը յաճախ ոչինչ բանի մը կախեալ է, ինչպէս, օրինակ, ընաւելու պարզ դիրքի մը:

- Եթէ արեան հարց ունի՝ բժիշկները կը թելադրեն կէս նստած դիրքի մը, այս դիրքը կը յաճախարարուի նաեւ բոնային անհանգստութիւն ունեցողներուն:
- Եթէ սրտանէներու ցաւ ունի՛, պէտք է որ մահճակալին ոտքի բաժինը ինչ մը աւելի բարձրացնել, որպէսզի արիւնը լաւ շրջագայի:
- Եթէ գլխու կամ ծոծրակի ցաւ ունի՛, խուսափեցէք խոշոր բարձերէն, որոնք աւելին կ'ապահովեն այդ ցաւերը:



- Եթէ առտուն գլխու պտոյտով կ'արթննաք, խուսափեցէք առանց բարձի պառկելէ եւ ձեր սենեակը ինչ մը բարձրացուցէք:

Կ'ՈՒԶՈՒԻ

- Ընկերութիւն մը, Նահր Մոթի շրջանին մէջ, կարիքն ունի քարտուղարուհիի մը, համակարգիչ գործածել գիտնալը, ինչպէս նաեւ Արաբերէն, Անգլերէն կամ Ֆրանսերէն լեզուներ գիտնալը՝ պայման: Վճարումի լաւ պայմաններ:

Դիմել հեռ. 01-887501 եւ 03-326823 թիւերուն:

ՀԱՅԱՇԷՆԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ – ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, 19 Յունուար 1997ին, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է: Ըստ մեր նախահայրերէն մեզի փոխանցուած բարի աւանդութեան, մատաղցու ոչխարներ կը զենուին, եւ մատաղ պատրաստուելով կը բաժնուի բոլոր ուխտաւորներուն եւ հաւատացեալներուն:

Ուստի, բոլոր անոնք, որոնք կը փափաքին մատաղի համար ոչխար նուիրել, կամ սրտաբուխ նուիրատուութիւն ընել Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ, թող բարեհաճին ներկայանալ քահանայ հօր, թաղականութեան գրասենեակը, ամէն օր, ժամը 9էն 12, կամ կապ պահել Տիկնանց Միութեան գանձապահին՝ տիկին Ֆիլօր Ինճէեանի հետ: Գրասենեակի հեռաձայնի թիւ 328474, թաղականութեան պատասխանատուի հեռաձայնի թիւ 328487 եւ 326980:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԽՈՀԱԳԻՐ

ԾՈՄԻՆՈՎ ԱՊՈՒՐ

Պատրաստութեան համար անհրաժեշտ են.-

- Մէկ խոշոր տուփ պահածոյ շոմին (մանրուած) եւ կամ համապատասխան քանակութեամբ թարմ եւ խաշուած:
- Խաշած եւ խոշոր գետնախնձոր մը:
- Կիտրոնի առատ (2էն 3 հատ) հիւթ:
- Մէկ խորանարդ խտացուած մսաջուր:
- Մէկ պզտիկ տուփ հեղուկ սեր:
- Քիչ մը ջուր:

Պատրաստութեան կերպը.-

Խաշած ու մանրուած շոմինն ու կեղուրուած գետնախնձորը *միքսըր*էն անցուցէք, ապա փոխադրեցէք կաթսայի մէջ, աւելցուցէք մէկ բաժակ գաղջ ջուր, խտացուած մսաջուրը, ըստ փափաքի՝ աղ: Թեթեւ կրակի վրայ եփեցէք, մինչեւ որ պղպջակներ յայտնուին:

Ապա աւելցուցէք կիտրոնի հիւթը եւ կրակը մարելէն վայրկեան մը առաջ՝ հեղուկ սերը:

Հրամցուցէք ներկայանալի խորունկ ամաններու մէջ՝ կարմրած հացի կտորներով զարդարուած:

ԱԶԳԱՍՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԾԱԲԹՈՒԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Հօրս ոտնահետքը փափուկ էր բարձի նման:
Նրա մէջ իմ հսկայ մաքառումն էր ննջում:
Ես ի՜նչ իմանայի,
որ նա իր քրտինքով
լայն բերանն էր փակում ամէն քաղցած հոգսի:
Ես ի՜նչ իմանայի: Երբ որ մանրատեղ
քայլերս էին լցւում ողկոյզի պէս: Քամին
մօր պէս ստինքն հանում,
կերակրում էր անխօս...
կծկուած ցրտերին:
Ստուերս բուրում էր
ծեր մայթի կկոցած ու լուռ բիբի վրայ,
երկինքը ձայնիս մէջ անվերջ ընդլայնւում էր,
ես մերկ էի, ինչպէս մարդու արտաբերած
առաջին բառերը: Հեռուն՝ գրկի՜ նման...
կեանքը գեղեցիկ էր.
եւ ես քայլո՜ւմ էի
հօրս պիրկ ուսերի ազատութեան միջով...
Հիմա՛,
երբ ճամբաս սլաք է ժամացոյցի,
եւ ինքս եմ կշռում ծանրութիւնը պահի,
հայեացքս չի վրիպում նախնեաց նետի հանգոյն,
ոռնող երակներս՝ մի – մի ձէնով – Օհան,
ամէն միտքս տանջուող Մհեր է քարայրում,
երբ հօրս ուսերի ազատութիւնն արդէն
արեանս խորքերում է ծծուել յուշերի պէս,
երբ կպել եմ ուսերիս հոգսերը բրածոյ,
ճանապարհիս ահեղ հանգոյցները մէկ – մէկ
արձակելու համար՝
շանթուա՜ծ ետ եմ նայում.
իմ ուսերի դա՜ռը ազատութեան միջով
քայլող որբ երեխա՜յ...

ՌՈՊԵՐԹ ԵՍԱՅԵԱՆ

Արցախ
8 - 09 - 88թ.

ԴԷՄՔԻ ԵՒ ՄԱՐՄՆԻ ԽՆԱՄՔԸ ՏՕՆԵՐՈՒ ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ

Անքնութիւն, խմիչքի չափազանցութիւններ, վերջին վայրկեաններու հեւքը կր յոգնեցրնեն մարմինը եւ կ'այլափոխեն դէմքը:

Ահաթէ ի՛նչ կարելի է ընել՝ տօներու վաղորդայնին գեղեցիկ ու կազդուրուած երեւնալու համար:



Գլխու մարձում...

- *Նախեւառաջ՝ ուշադրութիւն դարձնել հագուստին եւ հրաժարիլ դեղին, կարմիր, կանաչ գոյներէն, որոնք անմիջապէս կր չեշտեն դէմքին յոգնութիւնը, նաեւ՝ կրել փաստիլ գոյնի (վարդագոյն, բաց կապոյտ, բաց մանիշակագոյն...) հագուստներ, շապիկներ, որոնք ընդհակառակը կր չեզոքացնեն այդ յոգնութիւնը:*
- *Տօներու վաղորդայնին կ'արթննաք տակնուվրայ, յոգնած ու սպառած: Լաւագոյնը պիտի ըլլայ այն, որ շուրջ տասը վայրկեան տրամադրէք ձեր գլուխը եւ ձակատը մեղմօրէն մարձելու՝ ձեր տասը մատներով:*
- *Լոգանքը լաւագոյն կազդուրիչն է. բայց փոխանակ լոգարանին մէջ երկարելու եւ, ընդհակառակը, աւելի՛ թուլնալու, նախընտրեցէք ցնցուղը, որուն աւարտին ջուրը քիչ մը պաղեցնելու չմոռնաք:*
- *Անքնութեան պատճառով կոպերը կ'ուռին եւ տգեղ տեսք մր կու տան աչքին: Ասոր համար կարելի է կոպերուն վրայ գաղջ թէյի մէջ թաթխուած բամպակներ գետեղել եւ հէն տասը վայրկեան պահել՝ մերթ ընդ մերթ բամպակը փոխելով:*
- *Դէմքին մորթը «առողջացնելու» եւ անոր գոյն ու գեղեցկութիւն տալու համար, ձեր ընթացիկ սերով մաքրելէ ետք, հանքային ջուր սրսկեցէք (սփրէյի ձեւով) ձեր դէմքին, եւ չատ չանցած՝ ձեր մորթը վարդագոյն երանգ մր պիտի ստանայ, եւ յոգնութեան գիծերը պիտի չքանան:*
- *Վերջապէս, անքնութիւնը պիտի թուլցնէ մեր ամբողջ մարմինը, հետեւաբար, յաւ նախաճաշ մր (պտուղի հիւթ, հացահատիկ, կաթնեղէն...) միայն կրնայ վերաշխուժացնել մեզ: Թելադրելի է նաեւ Ա. կենսանիւթի դեղահատ մր, որ օրուան սկիզբը առնելով՝ ամբողջ օրուան ընթացքին ուժ պիտի հայթայթէ մեզի:*

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ ներատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը *ընթեռնլի գիրով* (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

Մարզական Մարզական

ԱՆՏԵՐՍՈՆԻ ԿԱՐՄԻՐ ՔԱՐՏԸ ԿԸ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑ

Իրավիոյ Ֆուրպոլի ախոյեանութեան գծով, Վիչենցա - Պոլոնիա (2 - 0) մրցումին, իրաւարար Մարչելօ Նիբի փորորիկ ապտղծեց, 35րդ վայրկեանին ազդարարութիւն մը փալով չուէյցացի միջազգային Քևէք Անդերսոնի:

Նախապէս ազդարարութիւն մը ափացած ըլլալով, 35րդ վայրկեանին իր մարզիչին Ռենցօ Ույիվիերիի հետ կը խօսէր եւ կը փորձէր զայն համոզել, որ գինք փոխարինէ: Յանկարծ դաղին քարտ մը, եւ Անդերսոն հեռացաւ դաշտէն:

«Պէտք է մրցումին իրաւարարին հետ խօսէր: Ոչ մէկ այլ անձի հետ խօսակցութիւն», ըսաւ Նիբի:

Այս արտայայտութիւնը չհամոզեց հանդիսատեսները, ոչ ալ Իտրպոլի շրջանակը: «Քոռիեռէ Տելլօ Սփորթ» թերթը առաջարկեց, որ իրաւարար Նիբի պատժուի:

Հարցը կրնայ քաղաքականայ: Պոլոնիայի պատասխանատուներէն եւ ծայրայեղ ազգայնամոլական քաղաքագէտ Ֆիլիփօ Պնեսկի պահանջեց վարչապետ Ռոմանօ Փրոտիէն, որ միջամտէ: Հարցը կրնայ հասնիլ խորհրդարան:

Վարչապետ Փրոտիի ուղղուած նամակի մը մէջ, Պնեսկի կը յայտնէ, թէ իր «աներևակայելի եւ կողմնակալ» որոշումով, Նիբի Պոլոնիայի դէմ գործեց եւ վնաս հասցուց չուէյցացի յառաջապահին, որ առնուազն մէկ մրցում պիտի կախաղայի:

Քանի մը օրէ ի վեր, Պոլոնիայի ճաշարաններուն եւ փողոցներուն մէջ կը խօսուի այս դէպքին մասին, դէպք մը՝ որ սկսած է բիւզանդական վէճի վերածուիլ:

Ղ.

ՎԵԿԱ ԹՈԹԵՆՀԱՄԻ ԱՆԴԱՄ



Ռամոն Վեկա

Զուիցերիացի միջազգային յետսպահ Ռամոն Վեկա հաւանարար միանայ Թոթենհամի: Այժմ Քալիարիի անդամ Վեկա բժշկական քննութեան պիտի ենթարկուի եւ ապա պիտի տեսակցի Թոթենհամի պատասխանատուներուն հետ:

Վեկա երեք տարի մաս կրնայ կազմել Թոթենհամին: Այլ գուիչերիացի մը՝ յառաջապահ Ատրիան Քնուփ պիտի վերադառնայ Ֆ. Ք. Պալ: 48 անգամ ազգային խումբին չապիկը կրած Քնուփ, 1980էն 1988 մաս կազմած էր Պալին, ապա միացած էր Քարլսրուհէին:

ՋԻԼԻՑԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՊԻՏԻ ԲԱՑԱԿԱՅԻ

Չիլիցի յառաջապահ Ռոնալտօ Ֆուենթէս յառաջիկայ Կիրակի օր պիտի բացակայի Մոնտիալի զտումի Չիլի-Փերու մրցումէն:

Վերջերս Ակրժանթինի դէմ մրցումին իր երկրորդ ազդարարութիւնը ստացած, այս մարզիկը ինքնաբերաբար պիտի չմասնակցի յաջորդ մրցումին: Իրաւարարը անուշադրութեամբ հետեւանքով փոխանցում չէր կատարած Ֆիֆային:

Մրցումը տեղի պիտի ունենայ Լիմայի մէջ:

ՕԴԱՆԱՒԱՅԻՆ ՏՈՄՍԵՐ ԵՒ ԳՈՅՔԵՐՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԱԵՒ ՆԱՍԱԿՆԵՐՈՒ ԱՐԱԳ ԱՒԱՔՈՒՄ

ara TRAVEL IATA

ARA TRAVEL, ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ, ՆԱՍԱԿԱՏԱՆ ՇԷՆՔ,
ՀԵՌ. 584340 – 583916 – 490211
ԹԵԼԵՔՍ՝ ARATRA LE 44082

ՄԱՍՆԱՒՈՐ ԱՒՈՒԵՑՈՒԹԻՒՆ


ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ «ԲԱԽՏԱՒՈՐ» ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ



Խուան Փիցի, որ նշանակեց «բախտաւոր» կոլ մը:



Քիքօ Նարվաէս



Տանիէլ Փրոտան, որ իր առաջին մրցումին յաջողեցաւ կոլ նշանակել:

Սպանիոյ ախոյեանութեան 18րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնա 24 ժամ պարագլուխի դիրքին վրայ մնալէ ետք, իր տեղը կիջեցաւ Ռէալ Մատրիտի, որ ցարդ կր մնայ միակ անպարտելի կազմը:

Տեփորթիւս Քորունա, որ նախքան 18րդ հանգրուանի մրցումները, Ռէալ Մատրիտի պէս անպարտելի կր, իր դաշտին վրայ կրեց այս եղանակի իր առաջին պարտութիւնը, իր հիւրէն՝ Պարսելոնայէն:

Մրցումին արդիւնքը կրնար ի նպաստ Տեփորթիւոյի ըլլալ, եթէ փրաւարարը պաշտին տէրերուն փենալթի մը չնորհէր, բայց իրաւարարները չտեսան, որ Եոսիփ Կուարտիոլա ձեռքով կասեցուցած կր գնդակը:

Տեփորթիւս Քորունա - Պարսելոնա մրցումը կր նմանէր Պրագիլիոյ ախոյեանութեան մէկ մրցումին, որովհետեւ պաշտին վրայ կր գտնուէին 5 պրազիլիացի մարգիկներ, որոնցմէ մէկ կրսակայն (Տոնաթօ) սպանական հպատակութիւն ստացած է, Ցրդ մրն ալ կրնար ներկայ ըլլալ (Ճիովանի), բայց ան վիրաւոր էր: Տոնաթոյի կողքին դաշտ ներկայացած էին Մաուրօ Միլվա, Ռիվալտօ եւ Նորեկ մարգիկ Ռենալտօ, որ իր առաջին մրցումը կը կատարէր Լա Քորունայի հետ: «Խեղճ» Ռենալտօ առանձին մնացած էր, բայց անոր կազմը երեք կէտ խլեց դաշտին տէրերէն:

Պրազիլիացի մարգիկները, ինչպէս նաեւ երկու խումբերուն օտար մարգիկները չկրցան կոլ նշանակել եւ... սպանացի մարգիկ Խուան Փիցի ինք եղաւ միակ կոլը նշանակողը, մրցումի աւարտէն երեք վայրկեան առաջ, երբ անոր կխու հարուածը ուղղութիւնը փոխելով մուտք գործեց քամերունցի բերդապահ Ժաք Մոնկոյիրերդէն ներս:

Ռէալ Մատրիտ եւս բախտաւոր կոլ մը նշանակեց Աթլեթիքօ Պիլպաոյի րերդէն ներս, որուն մարգիչն է Փարիզ Սէն Ժերմէնի նախկին մարգիչը՝ Լուիս Ֆեռնանտէս:

Մրցումին միակ կոլը նշանակեց երիտասարդ յառաջապահ Ռաուլ Կոնսալէս, օգտուելով Պիլպաոյի րերդին առջեւ ստեղծուած իրարանցումէն: Մրցումին ներկայ էին 45 հազար հանդիսատեսներ:

Իր այս յաղթանակէն ետք, Ռէալ Մատրիտ այժմ միայն 2 կէտի առաւելութիւն ունի Պարսելոնայի վրայ, իսկ 5 կէտի առաւելութիւն՝ Տեփորթիւոյի վրայ:

Ախոյեան Աթլեթիքօ Մատրիտ 4 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց վերջին դիրքը գրաւող Էսթրեմատուրան, այս վերջինին դաշտին վրայ: Մինչեւ մրցումին 80րդ վայրկեանը, Աթլեթիքօ 4 - 0 արդիւնքով յառաջացած էր, բայց վերջին 10 վայրկեանին 2 կոլ ստացաւ, մէկը՝ փենալթիով:

Ռումանացի միջազգային մարգիկ Տանիէլ Փրոտան, որ իր առաջին մրցումը կր կատարէր Աթլեթիքոյի հետ, նշանակեց մրցումին առաջին կոլը (23րդ), իսկ Քիքօ Նարվաէս (65րդ եւ 67րդ) եւ Խուան Քարլոս Կոմէս (70րդ) նշանակեցին մնացեալ կոլերը:

Ռէալ Սոսիետատ մնացորդ դիրքին վրայ, երբ մրցումի վերջին վայրկեանին կոլ մը նշանակելով, 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռէալ Մարակոսան, որ քսան ամիս առաջ 1995ի Եւրոպայի բաժակակիր խումբերու բաժակը չհաճ էր, իսկ այժմ կր գրաւէ րնդհանուր դասաւորման 19րդ դիրքը:

Ռէալ Վայատոլիտ 2 - 0 արդիւնով յաղթական վերադառնալէ ետք Սելթա Վիկոյի դաշտին, բարձրացաւ 7րդ դիրքին:

Ստորեւ՝ 18 հանգրուանի մրցումներուն թեքնիք արդիւնքները.

Էսփանիոլ - Քոմփոսթելա 0 - 2
Էսթրեմատուրա - Աթլեթիքօ Մատրիտ 2 - 4
Հերքուլէս - Սփորթինկ Խիխոն 1 - 1
Ռէալ Սոսիետատ - Լոկրոնես 2 - 1
Ռասինկ Սանթանտեր - Թեներիֆե 1 - 2
Ռէալ Սոսիետատ - Ռէալ Սարակոսա 1 - 0
Ռէալ Մատրիտ - Աթլեթիքօ Պիլպաօ 1 - 0
Տեփորթիւս Քորունա - Պարսելոնա 0 - 1
Սելթա Վիկօ - Ռէալ Վայատոլիտ 0 - 2
Ռէալ Պեթիս - Վալենսիա 1 - 1
Ռայօ Վայեքանօ - Սեւիլա (յետաձգուած ձիւնի պատճառով):

ԴԱՍԱԿԻՐՈՒՄ

	ԿԷՏ
1.- Ռէալ Մատրիտ	42
2.- Պարսելոնա	40
3.- Տեփորթիւս Քորունա	37
4.- Ռէալ Պեթիս	36
5.- Աթլեթիքօ Մատրիտ	32
.....	
20.- Սեւիլա	14
21.- Հերքուլէս	12
22.- Էսթրեմատուրա	8

ԷՐԻՔՍՈՆ՝ ՍԱՆՏԸՐԼԷՆՏԻ ՆՈՐԵ՞ԿԸ

Անգլիոյ Բարձրագոյն դասակարգի կազմերէն Սանտըրլէնտ հաւանաբար ձեռք ձգէ շուէտացի միջազգային մարզիկ Եան Էրիքսոնը, վճարելով 420 հազար տոլար:

29 տարեկան Էրիքսոն, որ մաս կը կազմէ Հելսինկիպորկին, մեծ տպաւորութիւն գործած է մարզիչ Փիթըր Ռիտի վրայ, որ ներկայ էր շուէտացիին սիրագործութիւններուն, եու.է.էֆ.Ա.ի գծով, Ասթոն Վիլայի դէմ մրցումին:

ԱՅՍ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ՔԼԻՆՍՄԱՆ ՊԻՏԻ ՄՆԱՅ ՊԱՅԷՐՆ ՄԻՒՆԻԽ

Գերմանիոյ ապգային խումբին խմբապետ Եիւրկըն Քլինսման, որ սպառնացած էր լքել Պայէրն Միւնիխը եւ միանալ այլ կավմի մը, մինչեւ տարեվերջ պիտի մնայ Պաւարիոյ հետ:

32 տարեկան Քլինսման դժգոհ էր խումբին պաշտպանողական խաղաձեւէն: «Հոս ժամանած էի ան յոյսով, որ ախոյեանութեան տիտղոսին ու բաժակին պիտի տիրանանք, սակայն ցարդ ոչ մէկ իրագործում», ըսաւ Քլինսման:

Պայէրնէն այլ մարզիկ մը՝ Քրիսթիան Ցիկը հաւանաբար ստորագրէ Ա. Սէ. Միլանի տոմարներուն վրայ: Այլ յետսպահ մը եւս՝ Օլիվըր Քրէօցըր կրնայ հեռանալ Պաւարիոյ կավմէն:

ԹՈՇԱՔ ԿՐՆԱՅ ԼՔԵԼ ՏԵՓՈՐԹԻՒՕ ՔՈՐՈՒՆԱՆ



Թոշաք

Տեփորթիւս Քորունայի մարգիչ Ճոն Թոշաք յայտնեց, թէ այս տարեշրջանի աւարտին պիտի լքէ կազմը:

Նախապէս երկու անգամ Ռէալ Սոսիետատ եւ անգամ մըն ալ Ռէալ Մատրիտ մարգած Թոշաք չէ կրցած փոխարինել նախկին մարգիչ Արսենիս Իլիեսիասը: Ան կր քննադատէ իր պաշտպանողական խաղաձեւին համար:

Այս քննադատութիւնները սաստկացան անցեալ շարաթ, Պարսելոնայի դէմ մրցումին: «Պարսա»ի մարգիչն ալ Պոպի Ռոպսըն չարունակ կը քննադատուի մամուլին կողմէ:

ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ 11 ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Շաբաթասկիզբին, «Ա Պոյա» (Փորթուգալ), «Տոն Պայոն» (Սպանիա), «Ֆութ» (Պելճիքա), «Քիքըր» (Գերմանիա), «Լա Կազեթա Տելլօ Սփոր» (Իտալիա), «Օնզ Մոնտիալ» (Ֆրանսա), «Սփոր» (Զուիցերիա), «Ֆութպոլ Ինթերնասիոնալ» (Հոլանտա) եւ «Ռուրլտ Սաքըր» (Անգլիա) մարզաթերթերուն լրագրողները միաձայնութեամբ ընտրեցին Դեկտեմբեր ամսուան լաւագոյն կազմը:

Ստորեւ՝ լաւագոյն 11 մարզիկներուն անուանները.



Մարզական Մարզական

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆՍԱՐ, ՆԸԺՄԷ, ՍԱՖԱ ԵՒ ՌԻԱՏԱ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԱՐՃԱՆԱԳՐԵՑԻՆ

Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան 20րդ հանգրուանի մրցումներուն գծով երէկ 4 մրցումներ տեղի ունեցան։

Սաֆայի դաշտին վրայ, Սաֆա 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Պրոժր։ Էմմանուէլ Հէրիս (26րդ) եւ Մոհամէտ Մորթատա (82րդ) նշանակեցին Սաֆայի կոլերը։

Սայտայի դաշտին վրայ, վերջին դիրքը գրաւող Շեպիպէթ Մագրաա կրնար անակնկալի մատնել Բ. դիրքը գրաւող Նրժմէն։ Մագրաա բացաւ կոլերու հաշիւը, 2րդ վայրկեանին, չնորհիւ Օսման Ուէյայի, բայց Նրժմէ 2 անգամ փոխադարձեց Ուիսամ Ապտալլայի (33րդ) եւ Ժամալ Հաժի (64րդ) միջոցով։

Ռիատա Ուալ Ատապ անհամ մրցումէ մը ետք 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռասինկը։ Մրցումին միակ կոլը նշանակեց Մոհիէտտին Տրոլլի, 52րդ վայրկեանին։

Ախոյեան Անսար 5-0 արդիւնքով վերադարձաւ Հիւսիսէն, Սալամի դէմ մրցումէն։ Սելիմ Համգէ (24րդ), Ժամալ Թահա (32րդ եւ 90րդ), Ֆատի Ալլուշ (40րդ) եւ Ֆատի Հալլաք (81րդ) նշանակեցին կոլերը։

Ստորեւ դասաւորումը.-

	Մ	Յ	Հ	Պ	Նչ	Ստ	Կէտ
1. Անսար	20	16	3	1	46	5	51
2. Նըժմէ	20	12	4	4	39	18	40
3. Հ.Մ.Ը.Մ.	20	11	3	6	45	26	36
4. Հ.Մ.Մ.	20	11	2	7	34	31	35
5. Սաֆա	20	8	6	6	24	19	30
6. Ռիատա	20	7	9	4	15	13	30
7. Թատամոն Սուր	20	8	4	8	20	21	28
8. Ախա Ահլի Ալէյ	20	7	6	7	22	28	27
9. Շապապ Սահէլ	20	7	5	8	17	24	26
10. Պըրժ	20	5	6	9	14	22	21
11. Սաժէս	20	4	6	10	25	32	18
12. Ռասինկ	20	5	3	12	15	29	18
13. Սալամ	20	1	9	10	16	37	12
14. Շեպ. Մազրաա	20	1	8	11	14	41	11

Ա. ԷՍ. ՌՈՄԱ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ՌԵՏՆԱՓՈՎ

Ա. Էս. Ռոմայի նախագահ Ֆրանքօ Սենսի երէկ հասաւ Լիվըրփուլ, նոյնանուն խումբին պատասխանատուներուն հետ բանակցելու համար անգլիացի միջազգային միջնապահ Ձէյմի Ռետնափի փոխանցման շուրջ։

«Կացեթա Տելօ Սփորթ» թերթը կը գրէ, որ Ռոմա պատրաստ է վճարելու 4.8 միլիոն սթերլին։

Իտալիոյ դասաւորման 11րդ դիրքը գրաւող Ռոմա հետաքրքրուած է նաեւ պրագիլիացի միջնապահ Էմերսոնով (Միտրլգպորօ) եւ հոլանտացի էկար Տաւիտգով (Ա. Սկ. Միլան)։

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԳՐԱՏՈՒՆ

«Համազգայինի» Գրատունը կու գայ ընթերցասէր հասարակութեան տեղեկացնելու, որ ստացած են եւ վաճառքի դրուած են հետեւեալ գիրքերը.

1.- ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ (հաւրագիտարան), հրատարակիչ՝ Հայկական Հաւրագիտարանի Գլխաւոր Խմբագրութիւն, Երեւան, 1996։

2.- ԱՆԴՐԱՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԸ (երկու հատոր), հեղինակ՝ Հրաչիկ Սիմոնեան, Երեւան, 1996։

3.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ, հեղինակ՝ Սերգէյ Վարդանեան, Երեւան, 1995։

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

ԴԻՏԱԿԻ

ՅՈՒՆՈՒԱՐԻ ԹԻՒԸ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է ԱՐԴԵՆ

ԱՄՍՕՒԱՆ ՆՈՒԷՐԸ՝

ՇԱՐԼ ԱԶՆԱՒՈՒՐԻ որմագդը։

Փնտռեցէք բոլոր գրավաճառներուն մօտ։

ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Ակգային Աքսոր Գասարձեան վարժարանի վիճակահանութիւնը յետաձգուած է։

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ


Լ.Ո.ՄԱՍԻ «ԱՂԹԱՍԱՐ» ՍԱՍՆԱՁԻՒՂ - ԱՅՆՃԱՐ

Լ.Ո.Մասի «Աղթամար» մասնաճիւղի դարմանատան յանձնախումբի դարմանատան ֆոնտին յատկացուած վիճակահանութեան շահած են հետեւեալ թիւերը.

Ա. նուէր	թիւ	1551
Բ. նուէր	թիւ	1168
Գ. նուէր	թիւ	0998
Դ. նուէր	թիւ	1592
Ե. նուէր	թիւ	0264
Զ. նուէր	թիւ	0012

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՔԻԿԸՆԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ՓՈԹՈՐԻԿ ՍՏԵՂԾԵՑ



Շշուկներ կային, թէ Քեւին Քիկրն այս եղանակի աւարտին պիտի ներկայացնէ իր հրաժարականը, սակայն ան չհամբերեց եւ փոթորիկ մը ստեղծեց երէկ, հրաժեշտ տալով Նիւքէսըլին։

Քիկրն, որ յաւուրիկայ ամիս պիտի տօնէ իր 46րդ տարեդարձը, նախընտրեց չմնալ իր պաշտօնին վրայ եւ որոշեց հեռանալ ընդհանրապէս ֆութպոլի աշխարհէն։

1992 Փետրուարին Նիւքէսըլի մարզիչի պաշտօնը ստանձնած Քիկրն հրթիռային ընթացք տուաւ խումբին եւ գայն Բ. դասակարգի վերջին դիրքերէն բարձրացուց աւելիյաւ դիրքերու։ 1993ին, «կաչաղակներ»ը բարձրացան բարձրագոյն դասակարգ։

Տարի մը ետք, ան 10 տարուան համար համաձայնութիւն մը կնքեց Նիւքէսըլի հետ։ 1996ին, խումբը գրաւեց երկրորդ դիրքը, յաջորդելով Մանչեսթրր Եունայթրտի։ Այդ տարեշրջանի աւարտին, ան պլէքպրրնէն «որսաց» էրն Շիրրրը, վճարելով 15 միլիոն սթերլին (մրցանիշ մը)։

Քիկրն չատ բան կր պարտի Նիւքէսըլի նախագահ Սրր Ճոն Հոլի, որ նիւթական ներդրումով եղաւ իր յենարանը։

Իրրեւ մարզիկ Քիկրն ծանօթ էր իր արագ չարժումներով։ Թիւ 7 չապիկով հուչակաւոր, ան 1968ին համեստ Սքանթորփ Եունայթրտի հետ սկսաւ իր ասպարէզը, յետոյ միացաւ Լիվըրփուլի, 1971ին։ Անոր փոխանցումը արժած էր միայն 35 հազար սթերլին։ Ան մինչեւ 1977 մնաց «կարմիրներ»ուն հետ, ապա միացաւ Ս. Վ. Համպուրկին։

1977էն 1980, Պունտսլիկան էր որ վայելեց այս արագավազ մարզիկը։ Ս. Վ. Համպուրկի հետ ան հմայեց հանդիսատեսները։ Ապա, վերստին Անգլիա վերադարձաւ եւ միացաւ ՍաուԹհէմփթընի։ Ան 1982ին միացաւ Նիւքէսըլի, եւ մինչեւ 1984 մնաց անոր հետ, ապա վերջ դրաւ ֆութպոլիստի իր ասպարէզին։ 8 տարի ետք, ան պարձաւ Նիւքէսըլի մարզիչ։

63 անգամ Անգլիոյ ազգային խումբին չապիկը կրած Քիկրն, վերջին անգամ 1982ին Սպանիոյ դէմ մրցումին մասնակցեցաւ։ Ան ընդամէնը 21 կոլ նշանակած է ազգային խումբին հետ։

Լիվըրփուլի հետ, Քիկրն երեք անգամ չահեցաւ ախոյեանութիւնը, ապա 1977ին՝ Եւրոպայի ախոյեան խումբերու բաժակը։ Այդ օրերուն, ան միշտ ալ կը կերագանգէր ժամանակի հերոսները՝ Ռոտնի Մարչր, Սթան Պոլկր եւ Թոնի Քարին։

Այժմու Տեփորթիւս Քորունայի մարզիչին՝ Ճոն Թոշաքի հետ, Քիկրն վտանգաւոր յաւաջապահ Գլխաւորր 1974ին «Զկրիթի Շիլտ»ի մրցումին, Լիվըրփուլի եւ Լիծի միջեւ։ Ան կռիւ ունեցաւ վերջինին խմբապետ Պիլի Պրեմներին հետ։ Ան նաեւ կր յիշէ, որ վիրաւոր ըլլալով, միայն յուսահատական ներկայութիւն եղաւ 1982ի Մոնտիալին...

Քիկրնի հրաժարականը կր յիշեցնէ քանի մր տարի առաջ Քենի Տալգլիշի անակնկալ հրաժեշտը Պլէքպրրն Ռովրրգկն։

ՈՒԻԼՔԻՆՍԸՆ՝ ԱՆԳԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ԹԷՔՆԻՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

53 տարեկան Հաւուրրտ Ուիլքինսըն նշանակուեցաւ Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին թէքնիք պատասխանատու, դառնալով մարզիչ Կլէն Հատրլի գործակիցը։

Շեֆիլտ Ուէնկսդէյի եւ Լիծ Եունայթրտի մարզիչ Ուիլքինսըն վերջերս անգործ էր։ Ան ամիսներ առաջ պաշտօնանկ եղած էր Լիծի կողմէ, որուն հետ 1992ին հասած էր Անգլիոյ ախոյեանութիւնը։

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ *ՎԱՆԱՅ ՉԱՅՆ*

«ՀԱՅԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ» (ՀԱՍՑԵԱԳԻՐՔ)

Վանայ Չայնը, գործակցութեամբ՝ The MASK ընկերութեան, նախաձեռնած է «Հայերը Լիբանանի մէջ» հասցեագիրքի պատրաստութեան։

Հասցեագիրքը հիմնական չինայէ ընդգրկելու ամբողջ լիբանանահայութեան, ըլլայ Պէյրութի, ըլլայ Պուրճ Համուտի, Թրիփոլիի. Այնճարի թէ այլուր բնակող հայերու հասցեները եւ հեռաձայնի թիւերը։

Սոյն հասցեագիրքը ունի տեղեկատուական եւ առեւտրական բաժիններ։ Տեղեկատուական բաժինը պիտի ընդգրկէ անուն - մականուն, բնակարանի հասցէ եւ հեռաձայնի թիւ։ Տեղեկատուական բաժինին կրնան արձանագրուիլ բոլոր լիբանանահայերը, առանց որեւէ նիւթական մասնակցութեան։

Առեւտրական բաժինը պիտի ընդգրկէ առեւտրական կեդրոններու, վաճառատուներու, ընկերութիւններու, գործարաններու, գրասենեակներու, հաղորդակցութեան միջոցներու եւ մասնագիտական հասցէները, ծանուցումի ձեւով, սակագինը՝ ըստ չափի։

«Հայերը Լիբանանի մէջ» հասցեագիրքը պիտի ըլլայ իր տեսակին մէջ առաջինը, որ պիտի բովանդակէ տեղեկութիւններ նաեւ հայկական մշակութային, ընկերային, բարեգործական, մարզական, կրթական եւ բժշկական միութիւններու թէ հաստատութիւններու մասին։

«Հայերը Լիբանանի մէջ» հասցեագիրքին արձանագրուիլ փափաքողները կրնան կապուիլ «Վանայ Չայն» կամ The MASK ընկերութեան։ Հեռաձայնի թիւեր 582581, 583025, 267657 եւ 03-774127։

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը. ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ

ՀԱՅՐԵՆԻ ԿԻՆՕ - ԱՐՈՒԵՍՏ ԲԵՄԱԴՐԻՉՆԵՐ ԵՒ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ

կը ներկայացնէ

ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆ

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 9 Յունուար 1997, երեկոյեան ժամը 7.30ին, Ալեք Մանուկեան կեդրոնի մէջ, Ուաթուաթ։

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●Նիւ Նաբքաշի մէջ, ննրակառոյց, Ա. յարկի վրայ (170 քառ. մեթր), յարմար դարմանատան եւ գրասենեակի։ 3 ննջասենեակ, հիւրասրահ եւ ճաշարան, օժտուած էր-քոնտիսիոնէրով։ Հեռ. 03-666187։

ՍԿԱՎՏԻՒՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԵԼԹԻՔ ՋԱԽՋԱԽԵՑ ՔԻԼՄԱՐՆՈՔԸ

Սկովտիոյ ախոյեանութեան գծով յետաձգուած մրցումի մր ընթացքին, Բ. դիրքը գրաւող Սելթիք, անխնայ եղաւ Քիլմարնոքի նկատմամբ եւ 6-0 արդիւնքով յաղթանակ մր արձանագրելէ ետք տուն դրկեց հիւրը։

Ժորժ Քարեթէ հեթ-թրիք մր իրագործեց (18րդ, 65րդ եւ 90րդ), իսկ Սելթիքի մնացեալ կոլերը նշանակեցին Ձէյքի Մաքնամարա (23րդ), Մորթըն Ուիեկհորսթ (80րդ) եւ Քրիս Հէյ (88րդ)։ Մրցումին ներկայ էին աւելի քան 45 հազար հանդիսատեսներ։

Իր արձանագրած յաղթանակէն ետք, այժմ Սելթիք իր եւ պարագլուխի դիրքը գրաւող Ռէյնճըրգի միջեւ կէտերու տարբերութիւնը նուազեցուցած է 11ի։ Ան նաեւ յետաձգուած երկու մրցում ունի։

Վերոյիշեալ մրցումէն ետք, դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	Մրց	Կէտ
1. Ռէյնճըրգ	21	53
2. Սելթիք	20	42
3. Տաւնտի	22	33
.....		
8. Քիլմարնոք	20	20
9. Մատըրուէլ	21	18
10. Ռէյք	21	15

ՄԱՐՍԻՕ ՍԱՆԹՈՍ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ՊՐԱԶԻԼԻԱ

Այաքս Ամսթերտամի յետսապահ Մարսիս Սանթոս վերադարձաւ Պրագիլիա եւ միացաւ Աթլեթիկս Մինէյրոյ խումբին։

Ան դժգոհ էր Հոլանտայի մէջ եւ կր գգար, թէ պիտի չկարենայ դիմանալ Եւրոպայի մէջ։

1994ի Մոնտիալը չահող խումբին անդամ Մարսիս Սանթոս անտրեւակայելի մրցանիշ մր հաստատած էր Հոլանտայի մէջ, մրցումի 17րդ երկվայրկեանին կարմիր քարտ մր ստանալով։

Ան 1995ին միացած էր Այաքսի։ 15 Յունուարէն սկսեալ, Սանթոս պիտի կրէ Աթլեթիքս Մինէյրոյի չապիկը։

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի ելեւմտական շուկային մէջ, դրամանիշերու փոխանցման սակացոյցը հետեւեալն էր երէկ.

Սուրիական բլթոսկի	34.50 - 38.50 լ.ո.
Քուէյթեան տինար	5172.75 - 5176.75 լ.ո.
Յորդանանեան տինար	2184.10 - 2188.50 լ.ո.
Սէուտական ռիալ	411.10 - 413.30 լ.ո.
Սմանեան ռիալ	41.50 - 42.75լ.ո.
Քաթարեան ռիալ	424.70 - 428.70 լ.ո.
Եգիպտական կինէ	454.50 - 458.50 լ.ո.
Անգլիական սթերլին	2624.10 - 2628.44լ.ո.
Գերմանական մարք	986.30 - 990.22լ.ո.
Ֆրանսական ֆրանք	290.10 - 294.33 լ.ո.
Զուիցերիական ֆրանք	1140.01 - 1144.09 լ.ո.
Կիպրական փաունտ	3284.10- 3288.26լ.ո.
Իտալական լիր	998.00 - 1001.00 լ.ո.
Ամերիկեան տոլար	1547.00- 1556.00լ.ո.
Քանատական տոլար	1142.10 - 1146.52լ.ո.
Աւստրալիական տոլար	1219.10 - 1223.88 լ.ո.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	145,000 - 145,900 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	142,000 - 149,500 լ.ո.
Սմանեան մէկ ոսկի	133,500 - 149,500 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	19,650,000 - 20,150,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ արծաթ	273,500 - 274,500 լ.ո.

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նժդեհ Պաղտասարեան եւ գաւակունք
Տէր եւ տիկին Արամ Պաղտասարեան
Տէր եւ տիկին Լեւոն Լիպարիտեան եւ գաւակունք
Օր. Սօսի Պաղտասարեան
Օր. Սիրուն Պաղտասարեան
եւ համայն ազգականներ կր գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՀԱՅԿՈՒՀԻ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ
(Ծնեալ՝ Զէյթուն, 1910ին)

մահր, որ պատահեցաւ Ջորեքշաբթի, 8 Յունուար 1997ին։

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրր, կէսօրէ ետք ժամր 4ին, Ֆրրն Շրպպէքի Ազգային կերեզմանատան մատրան մէջ։

●Ներկայս ընդունիլ իրրեւ մասնակից։

●Յաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ուար-Ուար, Հինգշաբթի 9 եւ Ուրբար 10 Յունուարին։

ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՌՉՆՈՑ ԲՈՑՆԻՒ

Տէր եւ տիկին Պօղոս Մարքոսեան (Շուէյտ) փոխան գոյգ ոչխարի 300$:

Տիար Արթիւր Զաքէնեան (Euromeco SARL) 250$:

Տիկին Նուէր Մկրտիչեան 20$:

Տէր եւ տիկին Յարութիւն Նապոյեան 200$:

Տիկին Հայկուշ Փամպուքեան 100$:

Հայկուհի Շահինեանի մահուան տառապուիին առիթով տիկին Վերժին Խանիկեան 20$:

Տէր եւ տիկին Վարուժան Աղասարգիսեան 100$:

Տիար Պօղոս Պէօճէքեան 500$:

Տէր եւ տիկին Շաւարշ Խրաբրլեան, ոխտի առիթով 100$:

Տիկին Սեդա Թօփալեան 10$:

Տէր եւ տիկին Գէորգ Փոլատեան, Նոր Տարուան առիթով 300$:

Տէր եւ տիկին Տիգրան Միհրապեան, Նոր Տարուան առիթով 300$:

Տէր եւ տիկին Ղեւոնդ Սարգիսեան, փոխան ոչխարի 120$:

Տէր եւ տիկին Հրանդ Յովակիմեան, ոխտի առիթով 100$:

Իր ամուսնոյն մահուան Գ. տարելիցին առիթով, տիկին Անժել Պօղոսեան 300$:

Տէր եւ տիկին Վահէ Խաչատուրեան 25$:

Սուրէն Կարապետեանի մահուան տառապուիին առիթով, փոխան հոգենաշխ տիկին Վարդուհի Կարապետեան 50$:

Տէր եւ տիկին Յարութիւն Կարապետեան 100$:

Տէր եւ տիկին Միհրան Քէօրօղլեան, Նոր Տարուան առիթով 50$:

Բարեկամ մը, Նոր Տարուան առիթով 300$:

Տիկին Անի Տէր Աբրահամեան 20$:

Բարեկամ մը, Նոր Տարուան առիթով 400$:

Բարեկամ մը, Նոր Տարուան առիթով 100$:

Օրիորդ Թալին Գալայճեան, Նոր Տարուան առիթով 100$:

Տիկին Անահիտ Պաղճեան, Նոր Տարուան առիթով 100$:

Տէր եւ տիկին Յակոբ Գարամանուկեան, ոխտի առիթով 500$:

Վազգէն Ատապ Բիլէ. եւ երէցկին Արուսեակ Սանասարեան, Նոր Տարուան առիթով 100$:

«Անի» Մշակութային Միութեան անդամներ, Նոր Տարուան առիթով 300$:

Ազգային մը, ոխտի առիթով 100$:

Փոլ Կիրակոսեանի հոգւոյն համար, տիկին Ժիւլիէթ Կիրակոսեանի 200$:

Տէր եւ տիկին Միշել Զէյթունեան, Նոր Տարուան առիթով 50$:

***

●Յակոր Համբարձումեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի կը նուիրեն.

Տիար Օննիկ Թագուրեան 20.000 լ.ո., Զիլիֆեան եղբարք 15.000 լ.ո., Գարապետեան եղբարք 20.000 լ.ո., տիար Լուսինա Լուսինա 5.000 լ.ո., տիար Ժորժ Սասաս. 20.000 լ.ո., տիար Լիշաա Ապպուտ 20.000 լ.ո., տիար Հրաչ Մանուշեան 10.000 լ.ո., տիար Հայկ Փանոսեան 20.000 լ.ո., տիար Ղազար Ներսէսեան 30.000 լ.ո., տիար Սերոբ Խաչատուրեան 5.000 լ.ո., տիար Երջան Սահակեան 20.000 լ.ո., տիար Յակոբ Երջանեան 10.000 լ.ո., տիկին Մարի Սիմոնեան 10.000 լ.ո., տիկին Եղիսաբէթ Գէորգեան 20.000 լ.ո., տիար Նուպար Մանուկեան 20.000 լ.ո., տիար Յակոբ Խանենեան 20.000 լ.ո., տիար Գրիգոր Զէրէկեան 15.000 լ.ո., տիար Վարդան Ներսէս 25.000 լ.ո., տիար Անդրանիկ Ներսէս 20.000 լ.ո., ազգային մը 17.000 լ.ո., տիար Նազարէթ Գասպարեան 30.000 լ.ո., Եուսէֆ Ռաշէա եւ զաւակունք 20.000 լ.ո., տիար Փոլ Սալիպա 25.000 լ.ո., տիար Զիատ Հալապի 20.000 լ.ո., տիար Արիս Տողրամաճեան 20.000 լ.ո., Էմմէրճեան եղբարք 20$, տիար Յակոբ Յակոբեան 10$ եւ ազգային մը 10$:

●Իրենց հօր՝ Անդրէաս Արեւեանի մահուան տառապուիին առիթով, ա.եր եւ տիկին Ձոնի Արեւեան 25.000 լ.ո.

●Յարութիւն Դամադեանի մահուան առիթով կը նուիրեն.

Տէր եւ տիկին Համբարձում Թերզեան 100.000 լ.ո., ա.եր եւ տիկին Բաֆֆի Սիսլեան 50.000 լ.ո.:

(Շարունակելի)

ԱՆԻ ՉԷՕՐԷՔՃԵԱՆ

ԸՆԴ

ՎԱՐՈՒԺԱՆ ԹԷՆՊԷԼԵԱՆ

Խօսեցեալք

Պէյրութ, 5 Յունուար 1997

ԾԱԽՈՒ ԵՒ ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ

●Պուրճ Համուտ, Նոր Սիսի մէջ: 2 ննջարան, հիւրասրահ եւ ճաշարան ու յարակից մասեր: Հեռ. 03-875495:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●High Point 2, Տրպայա, 200 քառ. մեթր, յանձնում անմիջապէս, վճարումը կանխիկ: Դիմել՝ հեռ. 03-719829:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

●Համակարգիչի վրայ աշխատող օրիորդներ, ճախընտրաբար Պուրճ Համուտի շրջանէն: Դիմել՝ անձամբ, Աղասարգիսեան հաստատութեան:

ԾԱԽՈՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ

●HONDA CIVIC 83 մոտէլ, շատ լաւ վիճակի մէջ, օթոմաթիք եւ էր-քոնտիսիոնէ: Հեռ. 403824 եւ 582134:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Էլեկտրական կազմածներ ծախող հաստատութիւն մը կարիքն ունի 25էն 35 տարեկան ինքնաշարժի վարորդի մը՝ միջակ ուսումով եւ Լիբանանի ճամբաներուն ծանօթ: Դիմել՝ հեռ. 449265, տիկին Սիլվային:

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՄՈՒՏՔԻ ՆԻՒԹԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՁԵՐԲԱԶԱՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՂԱՀՈՎԱԳՐՈՒԵՑԷՔ

ԱՖՀԻԼԻ ՄՈՏ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԱՂԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ MEDNET-Ի

BANKERS ASSURANCE SAL WE WATCH OVER YOU

● ՆՈՒԱՃԱԳՈՑՆ սակերով
● ԱՌԱՒԵԼԱԳՈՑՆ խնամք
● Վճարման դիւրութիւններ

Հասցէ՝— Ազգային Խորհուրդի չէնք, ԱՖԷՏի կից, Հեռ. 263324

ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒՆՈՒԱՐԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԵԼՈՅԹ

Կ'ՈՒՆԵՆԱՅ ԷՍԹՐԱՏԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԵԿՆԱԲԱՆ

ԱՏԻՍ ՀԱՐՄԱՆՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԱՆԸ GOLDEN BEACHԻ ՄԷՋ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՆԳԱՎԱՌ ՄԹՆՈԼՈՐՏ

ՀԱՅԿԱԿԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ

ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՃԱԽ ՅԱՅՏԱԳԻՐ

Իր մասնակցութիւնը կը բերէ Հաեւ

ԱՐՄԱՆ ՊԱՊՂՋԷՃԵԱՆ

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ եւ իր նուագախումբին

23 տեսակ աղանդեր, ճաշ, խմիչք՝ *ուիսքի* եւ օղի

●ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԵԱՆ՝ ՍԱԿ 35

●*Կիրակի կէսօրին՝ սակ 15 $*

●*Փոքրերուն կէս գին:*

Մանրամասնութեանց համար դիմել Սթիւտիօ Խաչիկ Մալխասեան, Սանթըր Գերմանիկ, հեռ. 266118 եւ 03-261061, Սթիւտիօ ՃԵՔԱ, Պուրճ Համուտ, իսկ երեկոյեան՝ ճաշարան Կոլտըն Պիչ, հեռ. 402559, 407371 / 2,3,4,5:

«ԱԶԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր ան*նք, որոնք կը վաճառքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5:

ՄԱՀԱԶԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահապդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ կայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Հրայր եւ Զապէլ Ֆերմանեան
Տէր եւ տիկին Սագօ եւ Հուրի Խոսրովեան եւ զաւակ՝ Րաֆֆի
Տիկին Մարի Քէօչկէրեան եւ զաւակ՝ Սարգիս
Պետրոսեան ընտանիք
Խոսրովեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քեռիին եւ հարազատին՝

ՆԺԴԵՀ ԱՍԱՏՈՒՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
(Ծնեալ՝ Թաւրիզ)

մահր, որ պատահեցաւ Կիրակի, 5 Յունուար 1997, Թաւրիզի մէջ:

Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ջորեքշաբթի, 8 Յունուար, Թաւրիզի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Թաւրիզի Ազգային կերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իրրեւ մահագդ:

●Յանակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Հրայր Ֆերմանեանի բնակարանը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՍԱՄԻՐԱ ՋՈՒԼՀԱՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Յունուար 1997, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆԿՈՅԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Յունուար 1997, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՄԱԳԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Յունուար 1997, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:


ՀՌԻՓՍԻՄԷ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Յունուար 1997, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:


ՅԱԿՈԲ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Յունուար 1997, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10ին:

USE THE BEST, USE SIEMENS

SIEMENS

The World's Most Advanced Technology in Electrical Products





CIRCUIT BREAKERS

- Moulded case and air circuit breakers.
- Widest range covering 0-6300 AMPS.
- Exceptionally high sensitivity and precision.
- Thermal and magnetic adjustable trips.
- Up to 100KA short circuit breaking capacity.
- Optional solid-state electronic overcurrent release.
- Optional shunt trip, undervoltage release, motorized drive mechanism.

CONTACTORS

- Three and four poles available up to 1250A.
- Maintenance free vacuum contactors.
- Advanced technology long life contacts.
- Extremely noiseless operation.
- Mechanical interlocks, plug in timers, auxiliary contact blocks.
- High sensitivity thermal overload relays.

Protect your installations with SIEMENS Products.

ALL AVAILABLE NOW
at the authorized dealers

G. AYANIAN & SONS

Dora, Tel: 884914 - 870210 (jumping numbers) - Fax: 265187
Gemayzeh, Tel: 447940 - 445096 - Fax: 582357 - Cell: 03/627729 - 8

☆ Լոյս կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ *ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)*

Ձեր գործատեղիին մէջ գլխու ցաւեր պիտի առեղծուին. ամէն գնով իրատուեր ձեր կողմ ունենալու ճիգ մի՛ բաթափէ: Զգեցէ՛ք, որ հարցերը կարգադրուին իւրաքանչիւրով:

☆ *ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)*

Ծրագիր մը ջուրը պիտի իյնայ. մի՛ պարապարէ դուռ ձեզ ու բնաւ մի՛ չդայլայլուիք: Զգեցէ՛ք, որ հարցերը իրենէ իրենց լուծուին:

☆ *ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)*

Զոյգերը պիտի վերագտնեն զիրար եւ պիտի ապրին երջանիկ օրուան մը մէջ... Այս ուրախ առիթը պանծացնելու համար կազմակերպեցէ՛ ասնական երեկոյ մը:

☆ *ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)*

Փոքր հարց մը պիտի առեղծուի ձեր աշխատասենեակին մէջ. անմիջապէս խոհեմութեամբ առաջքը առէ՛ խնդրին, ապա թէ ոչ անիկա կը բարդանայ, եւ դուռ գլխու ցաւեր կ'ունենաք:

☆ *ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)*

Դէպքերն ու երեւոյթները պիտի արժեւորէ՛ հանդարտութեամբ եւ ապահովութեամբ, այսպէսով պիտի գտնէ՛ լաւ լուծումներ:

☆ *ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)*

Կասկածամիտ մի՛ ըլլաք, որովհետեւ այդ բնութագրով կրնաք խոովութիւններու պատճառ դառնալ եւ բնականոն ամուսնական կեանքի մէջ անհամաձայնութիւններ առեղծել:

☆ *ԿՇԻՌ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)*

Լաւ ու հաճելի լուր մը ձեր ասեն մէջ պիտի բերէ պայծառ արեւի շողեր: Օրը պիտի անցնի խաղաղ ու երջանիկ:

☆ *ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)*

Ձեր բախտը փորձեցէ՛ անվնաս բախտախաղով մը, կամ ջանացէ՛ իրագործել ինչուոր յոյն մը: Օրը բախտաւոր է, գործի անցէ՛:

☆ *ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)*

Կրնայէ՛ խոչոր բնակարան մը. եթէ իրատամբ կ'երազէ՛ ու կը բաղձայ ունենալ օճախ մը, կրնաք գոյն ձեռ անցընել ձեր աշխատասիրով:

☆ *ԱՅԾԵԼՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)*

Օրը երկու ձեւով կրնայ ներկայանալ. կա՛մ հաւասար, հաւասար շան մը պիտի ապահովէ՛, եւ կա՛մ պիտի կրկնապատկէ՛ զայն: Նախածեռնութիւն մը ունեցէ՛, որ կրնայ սմանչելի արդիւնքներ ապահ կամ կրնայ մնալ անարձագանգ:

☆ *ԾՈՎԱՆՈՑՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)*

Նոր գաղափարներ մէջտեղ մի՛ նետէ՛, այլ գտնացէ՛ ձեր ունեցած առօրեայ աշխատասիրութիւններով, որովհետեւ օրը յարմար չէ նոր նախածեռնութիւններու:

☆ *ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)*

Ձեր ունեցած դրամին արժէքը գիտցէ՛, արժեւորեցէ՛ ձեր աշխատասիրը եւ բարելաւեցէ՛ ձեր պահանջները եւ գործերը, ապա թէ ոչ վնասները կը բազմանան:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 3576

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. *Սեղեակը երկուքի բաժնող պատ - Զայնակից տառեր:*
2. *Մարդիկ - Ամսանուն մր:*
3. *Կծկած, ոլորած - Դեռ, տակաւին (հակ.):*
4. *Կիպրոսի երբեմնի հոգեւորական նախագահը:*
5. *Գինիի ոգի - Դատարան:*
6. *Բուն, հարազատ - Հայրենի մամուլին:*
7. *Թերի, անբաւարար:*
8. *Սարսռան - Վայրի խոց:*
9. *Մակոյկ (հակ.) - Ժամանեցին:*
10. *Եգարան, սանդուխ - Այրուբենէն:*

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. *Հայոց կաթողիկոս՝ Անանիա Ա. - Քանիոր (հակ.):*
2. *Շին Ֆէյնի գինուորական թեւը - Բանսարկու:*
3. *Մտերմիկ, տաքուկ - Շրջ՝ չարք:*
4. *Թաքուն պայմուցիկ (հակ.) - Կարծր ու թափանցիկ նիւթ:*
5. *Գոյականի տեսակը րնորոշող:*
6. *Էգ չորքոտանի - Ռամկօրէն այո՛:*
7. *Կրկնուած բաղաձայններ - Աստուածային:*
8. *Ցամաքամաս մը - Կիլիկեան քաղաք:*
9. *Երագ (հակ.) - Միգանք:*
10. *Մակաչէք - Հնարագուրկ (հակ.):*

ԹԻՒ 3575

ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ս	Ա	Մ	Ո	Ի	Ր	Ե	Ն	Ի	■
2	Ա	Տ	Ա	Ղ	■	Ե	Ռ	Ա	Ն	Դ
3	Հ	Ա	Մ	Ո	Յ	Թ	■	Կ	Ա	Ր
4	Ա	Մ	Ի	Ր	Ա	■	Լ	Ա	Ռ	Ո
5	Ր	■	Կ	Մ	Կ	Մ	Ա	Լ	■	Յ
6	Ա	Յ	Ո	■	Ի	Ր	■	Ա	Յ	Լ
7	■	Ա	Ն	Ա	Ն	Ո	Ի	Ռ	■	■
8	Ո	Տ	■	Թ	Թ	■	Ե	Ս	Ա	Ի
9	Յ	Ա	Ր	Ո	■	Յ	Ա	Ն	Կ	Ա
10	Ա	Կ	Ո	Ռ	Ի	■	Ն	Ա	Ն	Թ

ՇԱՔԻՄՇԻՒԼԻ ԱՅՑԵԼԵՑ ՖԱՀՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ

ՏՈՒՊԱՅ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Միացեալ Նահանգներու բանակի սպայակոյտի պետ գօր. Ճոն Շաքիշվիլի Երեքշաբթի օր տեսակցութիւն ունեցած է Սէուտական Արաբիոյ Ֆահտ թագաւորին հետ, հաղորդեց սէուտական պաշտօնական լրատու գործակալութիւնը, Ջորեքշաբթի օր:

Տեսակցութիւնը տեղի ունեցած էր Ռիատի մէջ եւ անոր ներկայ գտնուած են նաեւ Սէուտական Արաբիոյ պաշտպանութեան նախարարը, սէուտցի բարձրաստիճան պաշտօնատարներ, ինչպէս նաեւ ամերիկացի դիւանագէտներ: Տեսակցութեան մասին այլ մանրամասնութիւններ չփոխանցուեցան:

ԻՐԱՔ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ԾՈՑԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ՊԱՂՏԱՏ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Իրաքեան օրաթերթ մը Ջորեքշարթի օր դատապարտեց Միացեալ Նահանգները, որոնք կը շարունակեն գինուոր պահել Մոցի շրջանին մէջ:

«Սաուրա» օրաթերթը քննադատեց նաեւ Թուրքիան, որ անցեալ շաբաթ վերստին Իրաք թափանցեց քիւրտ ընդդիմադիրները հետապնդելու համար:

Իրաքեան օրաթերթը կը գրէ, որ ամերիկեան ուժերուն ներկայութիւնը կը վտանգէ շրջանի կայունութիւնը եւ բնակիչներուն ապահովութիւնը: Թուրքիոյ գինուորական գործողութեան ակնարկելով «Սաուրա» կը գրէ, որ Անգարայի տուած պատրուակները ոչ միայն անհիմն են եւ անիմաստ, այլ կը նպաստեն ամերիկեան քաղաքականութեան, որ թշնամական է Իրաքի հանդէպ:

ՁԱՓՈՆԻ ՄԷԿ ԾՈՎԱՓԸ ՔԱՐԻՒՂՈՎ «ՈՂՈՂՈՒԱԾ»

ՄԻՒՈՒՆԻ (ՁԱՓՈՆ), 8 (ՌԷՈԹԸՐ).- Ռուսական Նախոտքա քարիւղատար նաւը, որ Ցունուար 2ին երկուքի բաժնուած էր եւ անկէ քարիւղ սկսած էր թափիլ Ձափոնի ծովուն մէջ, երկրին ջրային ամէնէն հարուստ շրջապատերէն մէկը կրնայ մեծ համեմատութեամբ քայքայել, յայտնեցին պաշտօնատարներ, Ջորեքշարթի օր: Անիկա 19 հազար թոն ֆիուլ կը փոխադրէր:

Ջորեքշաբթի օր, 100 քմ.ի վրայ տարածուող ծովերեսայ շրջան մը ծածկուած էր քարիւղով:

ՄԷՅՃԸՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԵՒՐՈՊԱՅԻ ԴԷՄ ՁԸՆԹԱՆԱԼ

Բրիտանիոյ վարչապետ Ճոն Մէյճըր խոստացաւ չարունակել Եւրոպական Միութեան մէջ իր չինիչ դերակատարութիւնը: Ան հերքեց, թէ կրնայ հակաեւրոպական բնոյթի ընտրապայքար մը մղել:

Միւս կողմէ, վարչապետը Իտալիոյ կառավարութեանց օրինակը նշեց, գնուշացնելու համար բրիտանացիները ընտրական բարեկարգումներու դէմ: Ան ըսաւ, թէ իտալական փորձառութիւնը՝ Բ. Աշխարհամարտէն ի վեր 55 կառավարութիւններ, պէտք է գնուշացում բլլայ բրիտանացիներուն, թէ քաոսային վիճակ կրնայ ստեղծուիլ, եթէ Բրիտանիա չնչէ ընտրական ներկայ դրութիւնը:

(ՌԷՈԹԸՐ)

ԿՈՒԶԷՐ ԳԵՐՄԱՆԻԱ ՄՆԱԼ

ՊԵՐԼԻՆ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Պոսնիացի գաղթական մը, որ Պերլինէն Վիեննա ուղղուող օդանաւ մը առեւանգած էր, իրրեւ գէնք գործածած է փոքր դանակ մը, որ արտօնուած է օդանաւերուն մէջ, յայտնեց Պերլինի օդակայանին ապահովութեան բաժանմունքը, Ջորեքշարթի օր:

39 տարեկան օդահէնը գինաթափ եղած էր Պերլինի օդակայանին մէջ: Պոսնիացի օդահէնը դանակը մօտեցուցած էր օդաչուին ծոծրակին եւ պահանջած, որ օդանաւը վերադառնայ Պերլին:

Պոսնիացի գաղթականը ապաստանեալի իրաւունք պահանջած էր Գերմանիայէն: Անոր դիմումը մերժուելէն ետք, ան պահանջած էր հոն մնալ եւ աշխատիլ. իր նպատակին հասնելու համար, ան օդանաւը առեւանգած է:

●*ՅՈՒՆԱՍՏԱՆ Գերմանիոյ պիտի յանձնէ գերմանուհի մը, որ առնչակից է 1986ին Պերլինի մէջ տեղի ունեցած պայթումի մը, որ 3 գոհ եւ 200 վիրաւոր պատճառած էր: 31 տարեկան Անտրէա Հաուսլըր անցեալ Հոկտեմբերին ձերբակալուեցաւ Թեսալոնիկէի մօտ:*

ՊՐԵՆՍԸՆԻ ՓՈՐՁԸ ՁԱԽՈՂԵՑԱՒ

ԼՈՆՏՈՆ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Բրիտանացի Ռիչըրտ Պրենսընի օդապարիկով աշխարհի շրջանը ընող առաջին անձը ըլլալու փորձը, Ջորեքշաբթի օր վերջ գտաւ, սկսելէն նուազ քան 24 ժամ ետք, երբ թեքնիք հարցեր ստիպեցին զինք, որ էջք կատարէ Ալճերիոյ անապատին մէջ:

Անցեալ տարի Պրենսըն չէր յաջողած թռիչք առնել օդային անընպատ պայմաններու հետեւանքով: Ան արդէն օդապարիկով Ատլանտեանը եւ Խաղաղականը կտրած է:

ԵԼՑԻՆ ԴԱՐՁԵԱԼ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՄԷՋ

Ռուսիոյ նախագահ Պորիս Ելցին երկկ դարձեալ հիւանդանոց փոխադրուեցաւ, որովհետեւ կայն դարմանող բժիշկները նկատած են, որ անոր հարբուխը դէպի թոքատապ կարգացում ունեցած է:

Ելցին 2 օրէ ի վեր հարբուխ էր եւ Երկուշաբթիէն ի վեր ջնջած էր իր ժամադրութիւնները:

Ապգային Ապահովութեան պաշտօնակրկուած պետ՝ գօր. Ալեքսանտր Լեպէտ երկկ դարձեալ կոչ ուղղեց Ելցինի, որպէսզի հրաժարի իր պաշտօնէն, որովհետեւ անոր առողջական վիճակը անոր չ'արտօներ շարունակել իր բնականոն աշխատանքը:

Այլ գիծի մը վրայ, արտաքին գործոց նախարար Եւգենի Փրիմաքով երկկ կոչ ուղղեց ՕԹԱՆին, որպէսզի Ռուսիոյ հետ ստեղծէ յատուկ բնոյթի յարաբերութիւն: Փրիմաքով, որ կը խօսէր պաշտօնավարութեան առաջին տարեդարձին առիթով, վերյիշեցուց ՕԹԱՆին դէպի արեւելքը ընդարձակման Մոսկուայի բուռն ընդդիմութիւնը:

(ՌԷՈԹԸՐ)

ՏԻՆԻ - ՎԻԼԱՅԷԹԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՌՈՄ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Իտալիոյ արտաքին գործոց նախարար Լամպերթօ Տինի տեսակցութիւն ունեցաւ իրանցի իր պաշտօնակից Ալի Աքպար Վիլայէթիի հետ: Տինի յոյս յայտնեց, որ Իրան ինքզինք աւելի եւս հեռացնէ միջազգային ահաբեկչութեան շրջանակէն:

Արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութիւնը կը նշէ, որ Տինի ողջունած է Իրանի վերջին յայտարարութիւնները, որոնք չինիչ կին եւ պէտք է չարունակուին, «մինչեւ որ Թեհրան ամրողջութեամբ հեռանայ ահաբեկչութենէ»: Տինի աւելցուց, որ Իտալիա կ'ուզէ չարունակել Եւրոպական Միութեան սկսած երկխօսութիւնը, որպէսզի Իրան կամաց-կամաց վերամիանայ միջազգային ընկերութեան՝ իր բոլոր կապերը վերահաստատելով:

ՊԱՅԹՈՒՄ ՌՈՒՍԻՈՅ ՀԱՐԱՒԸ

ՄՈՍԿՈՒԱ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Հարաւային Ռուսիոյ Քապարտինօ-Պալքարիա չրջանին տեղական խորհրդարանին չինքը ցրնցուեցաւ Ջորեքշարթի առաւօտուն տեղի ունեցած ռումբի մը պայթումին հետեւանքով, յայտնեց «Իթար-Թասս» լրատու գործակալութիւնը: Մարդկային վնասներ չեն արձանագրուած: Ցստակ չէ, թէ ո՛վ կատարած է այդ խափանարարութիւնը:

Ցունուար 12ին չրջանին մէջ պիտի կայացուին նախագահական ընտրութիւններ, որուն միակ թեկնածուն նախագահ Վալերի Քոքովն է:

ՊԱՅԹՈՒՄՆԵՐ ԵՒ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԱԼՃԵՐԻՈՅ ՄԷՋ

ՓԱՐԻԶ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Ականուած երկու ինքնաշարժերու պայթումէն ետք, ալճերիացի ընդդիմադիր դեկավար մը կը սպառնայ պայթումներու նոր ալիք մը չղթայազերծել, կը յայտնեն Ալճերիոյ օրաթերթերը, Ջորեքշարթի օր:

Երկու պայթումները տեղի ունեցած էին Երեքշարթի օր: Առաջինը՝ Ալժէի համալսարանին մօտ, ուր 13 գոհ եւ 100 վիրաւոր խլած էր, իսկ երկրորդը տեղի ունեցած էր քանի մը ժամ ետք՝ արեւելեան Ումէլ Պուաղի նահանգին մէջ՝ եօթը գոհ եւ 11 վիրաւոր պատճառելով:

«Ուաթան» օրաթերթը կը գրէ, որ ապահովութեան ուժերը 17 ականներ չէզոքացուցած են անցեալ չարթուան ընթացքին: Իսկ «Լիպերթէ» կ'րսէ, որ իշխանութիւնները կրցած են իմանալ, որ 27 տարեկան Ֆարիտ Համանի անունով իսլամական մը ծրագրող «ուղեղ»ն է այս գործողութիւններուն:

ՏԱՃԻԿԻՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՈՐ ԸՆՈՅԹԻ ՆԵՐՔԻՆ ԲԱԽՈՒՄ

ՇԱԽՐԻՆԱՈՒ (ՏԱՃԻԿԻՍՏԱՆ), 8 (ՌԷՈԹԸՐ).- Տաճիկիստանի կառավարութեան գինեալ ամէնէն ուժեղ կունդերէն մէկուն հրամանատարը յայտնեց, թէ իր ուժերը Ջորեքշարթի օր Թունաւորնպատկ քաղաքին մօտ բախում ունեցած են գինեալ անկախ խմբակի մը հետ:

Գնդապետ Մահմուտ Խուտոյպերտիեւ առանց իրաւունքի միջամտութիւներ ահագանգ ստեղծած է Տաճիկիստանի դեկավարութեան մէջ: Նախագահ Իմամոլի Ռախմոնով հրահանգած է, որ գունդը գօրանոց վերադառնայ: Տարի մը առաջ գնդապետը հակակառավարական ըմբոստութիւն մը գլխաւորած էր:

1.5 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ ՎՆԱՍ

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Քալիֆորնիոյ չրջանին մէջ, Ամանորի օրերու ողողումները ցարդ աւելի քան 1.5 միլիառ տոլարի վնաս պատճառած են եւ կը նախատեսուի, որ այդ թիւը բարձրանայ:

Քալիֆորնիոյ ողողումները խլած են վեց գոհ, քանդած են հազարաւոր բնակարաններ եւ փճացուցած՝ մշակուած հսկայ տարածութիւններ: Ողողումին պատճառով նաեւ հազարաւոր մարդիկ հեռացուած են իրենց տուներէն:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ՄՈՍԿՈՒԱ.- Նոր Տարւան եւ ռուսական Ննդաթափառ նկենդանոյ Ծննդեան արձակուրդներուն 9 հոգի գուրտին զոհ գացած են Մոսկուայի փողոցներուն մէջ եւ 162 ուրիշներ հիւանդանոց փոխադրուած: Անոնց մեծամասնութիւնը անտուն էր: Ձերմաստիճանը այդ օրերուն գերնչէն վար 10չ մինչեւ 25 աստիճանի իջած էր:

ՓԱԼԵՐՄՕ.- Թրքական բեռնատար նաւ մը երկկ ընկղմեցաւ Միջերկրական ծովուն մէջ, Սիկիլիոյ ջուրերուն բացերը: Անձնակազմի 6 անդամներ կորսուած են:

ԻՍԼԱՄԱԲԱՏ.- Աֆղանիստանի *«Թալիպան»* գինեալները կրկնած են թմրեցուցիչի առեւտուրին դէմ պայքարելու իրենց խոստումը, սակայն ամերիկացի պաշտօնատար մը յայտնեց, թէ խոստումները բաւարար չեն, պէտք է գործնական քայլերու դիմել: Աֆղանիստան 1996ին շուրջ 2300 թոն *աֆիոն* արտադրած է:

ՀԻՒՍԹԸՆ.- Մագումով լեհ բժիշկի մը պաշտպան փաստաբանները Երեքշարթի օր յայտնեցին, թէ ան առանց իրաւունք ստանալու խլիրդի դէմ դեղ ծախած է, որովհետեւ ուզած է օգնել չափազանց ծանր հիւանդ մարդոց: Դեղրինք պատրաստած է եւ սկսած է հիւանդներուն ծախել 1970ական թուականներու վերջերուն:

ՍԻՏՆԻ.- Քիրիպարի կղզիներէն շուրջ 300 ուսանողներ եւ աշխատաւորներ երկկ կեդրոնական Խաղաղականի ջուրերուն մէջ կր գտնուին նաւու մը վրայ, ուր հրդեհ մը ծայր տուած է:

ՓԵՔԻՆ.- 30 տարուան ...ներն սաստիկ ձիւները 10 գոհ խլած են Չինաստանի ծայրագոյն արեւմտեան Քսինճիանկ չրջանին մէջ, ուր ոսկիի հանքերու մէջ չուրջ հազար աշխատաւորներ «բանտարկուած» են:

ՊԱՂՏԱՏ.- Իրաք հաստատած իրաւական ընդդիմադիր շարժում մը յայտնեց, որ երեքշարթի օր երկու պայթումներ ցնցած են Պաղտատը եւ հինգ վիրաւորներ պատճառած են, ըստ բաներին, հրթիռներ արձակած են իրենց կեդրոնատեղիին դէմ: *«Մուճահիտին Խալք»*ի բաներեր ամբաստանենց իրաւնաւ իշխանութիւնը:

ՆԻԿՈՍԻԱ.- Կիպրոս կը ծրագրէ ջուրի երեք կտրաններ կառուցել պարագրջանի աւարտէն առաջ, որպէսզի կարենայ պաքարիլ ջուրի տագնապին դէմ: Ջտարանները րմպելի եւ գործածելի պիտի դարձնեն ծովու ջուրը:

Երկրագործութեան նախարար Քոսթաս Փեթրիտէս ըսաւ, որ ջուրի տագնապը պիտի չյուծուի, սակայն պիտի մեղմանայ:

(ՌԷՈԹԸՐ)

LA RÔTISSERIE Ballester
Menu à 24 $
Ouvert midi et soir
PRINTANIA PALACE
Broumana:(04)960416/7/8

Speedway
BLANCO CENTER
ՀԵՌ. 585545-268962
ՕՐՈՒԱՆ ՃԱՇԸԼ
● ՄՂՈՒԽԻԼ

ՃԱՓՈՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԳԱՂՏՆՕՐԷՆ ՄՏԱԾ ԵՆ ԼԻՄԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

ԼԻՄԱ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Փերուի կառավարութիւնը դատապարտեց Լիմայի մէջ Ձափոնի դեսպանին ապարանքին մէջ 74 պատանդներ բռնած մարքսեան գինեալներուն «ահարեկչական շանթաժը», սակայն անիկա րսաւ, թէ ըմբոստներուն հետ հաղորդակցութիւնը պիտի չարունակէ, առանց արիւնահեղութեան վերջ տալու համար տագնապին:

Երեքշարթի յետմիջօրէին, ձափոնական պատկերասփիւռի «Ասահի» կայանին մէկ թղթակիցը եւ անոր թարգմանը ըմբոստներուն հրաւէրով գաղտնօրէն մուտք գործած են ապարանքէն ներս: Անոնք 2 ժամ ետք դուրս եկած են եւ ոստիկանութեան կողմէ ձերբակալուած: Անոնց նկարչական մեքենան եւ տեղեկութեանց տետրակը գրաւուած է:

Ձափոնի վարչապետ Ռիւթարօ Հաշիմոթօ Ջորեքշարթի օր քննադատեց թղթակիցը, ըսելով, թէ անոր արարքը կրնար վնաս հասցնել տագնապը լուծելու ճիգերուն: Անոր արարքը դատապարտուեցաւ նաեւ Փերուի վարչապետ Ալպերթօ Փանտոյֆիի կողմէ:

ՔՐԻՍԹԱՓԸՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՎՃԱՐԵԼ ՄԱԿԻՆ ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ ՊԱՐՏՔԵՐԸ

ՄԱԿ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Ուորրըն Քրիսթաֆըր Երեքշարթի օր յայտնեց, թէ ՄԱԿի ամերիկեան պարտքերուն հատուցումը նախագահ Քլինթընի կառավարութեան 1997ի օրակարգին թիւ մէկ առաջնահերթութիւնն է:

Ուաշինկթրն ՄԱԿի աւելի քան մէկ միլիառ տոլար պարտական է: Դիւանագէտներ յայտնեցին, թէ Քլինթրն պիտի առաջարկէ գրեթէ ամրողջ գումարը հատուցել, թէեւ կասկածելի է, որ առաջարկը ընդունուի խորհրդարանին կողմէ:

Քրիսթաֆըր կր խօսէր ՄԱԿի նորընտիր ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ իր տեսակցութենէն ետք:

Հակառակ 2 պաշտօնատարներուն միջեւ փոխանակուած ջերմ արտայայտութիւններուն, Միացեալ Նահանգներ եւ Անան կր թուին տարբեր մօտեցումներ ունենալ ՄԱԿի բարեկարգումներու բանալու հարցին: Այս հարցին պատճառով էր, որ Ուաշինկթրն, ըստ բացատրութեանց, խափանած էր նախկին ընդհանուր քարտուղար Պութրոս Ղալիի վերընտրութիւնը: Անան ընդհանուր քարտուղարի պաշտօնին հասած էր Միացեալ Նահանգներու օժանդակութեամբ:

Միացեալ Նահանգներու համար բարեկարգում կր նշանակէ անձնակազմին մէջ մեծ կրճատումներ, իսկ ըստ Անանի, չեչտր պէտք է դրուի համաշխարհային մարմին վերակառուցման վրայ, գայն աւելի օգտակար դարձնելու համար:

ԱՐԿԱԾԸ ԱՅԼ «ԳԱՂՏՆԻ» ԱՐԿԱԾ ՄԸ ԿԸ ՅԻՇԵՑՆԷ

ՈՒԱՇԻՆԿԹՐՆ, 7 (ՌԷՈԹԸՐ).- Միացեալ Նահանգներ Երեքշարթի օր խոստովանեցան, թէ 1993ին հապճեպօրէն հեռացուցած են Մոսկուային մէկ ինքնաշարժի մահացու արկածի մը հետ կապ ունեցող իրենց մէկ դիւանագէտը:

Արտաքին գործոց նախարարութիւնը րսաւ, թէ արկածէն 36 ժամ ետք հեռացուցած է դիւանագէտը, ռուսական իշխանութեանց կողմէ հաւանական դատական հետապնդումներ կանխելու համար: Ան իր ինքնաշարժով կին մը սպանած էր:

Նախարարութիւնը այս դէպքին մանրամասնութիւնները հրապարակեց սպասելով ոստիկանութեան մէկ տեղեկագիրին Ուաշինկթրնի մէջ անցեալ Ուրբաթ օր տեղի ունեցած արկածի մը մասին, որուն ընթացքին 5 ինքնաշարժներ բախում ունեցած են եւ 16 տարեկան պարմանուհի մը գոհ գացած: Արկածը պատճառած է վրացի դիւանագէտ մը:

Հարցը փոթորիկ ստեղծած է Ուաշինկթրնի մէջ, դիւանագէտներու անձեռնմխելիութեան հարցով:

ՄՈՆԱՔՕ 700 ՏԱՐԵԿԱՆ

ՄՈՆԹ ՔԱՐԼՕ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Մոնաքօ Ջորեքշարթի օր սկսաւ 10 ամսուան վրայ երկարող հանդիսութիւններու, նչելու համար իր 700ամեակը: Հանդիսութիւններ, սակայն մեծ ադմուկ պիտի չրարձրացնեն եւ պիտի մնան իշխող ընտանիքին եւ անոր հիւրերուն ծիրին մէջ:

Իշխան Ռենիէ Գ. 29րդ անդամն է Կրիմալտի ընտանիքին, որ 1297էն ի վեր կ'իշխէ Մոնաքոյի մէջ:

Հանդիսութիւնները պիտի երկարին մինչեւ Հոկտեմբեր եւ անոնց կարգին պիտի բլլան մրցաշարքեր, երգահանդէսներ եւ այլ ձեռնարկներ:

«ՎԱՐՁԿԱՆ ՉԿԱՅ»

ՓԱՐԻԶ, 8 (ՌԷՈԹԸՐ).- Ֆրանսայի նախագահութեան կապուած ապահովութեան նախկին պատասխանատու Այլէն Լը Քարօ հերքեց այն լուրերը, թէ վարձկան գինուորներէ բաղկացած ուժ մը կր կազմէ, օժանդակելու համար Զայիրի կառավարութեան՝ պայքարելու Ռուանտայի գօրակցութիւնը վայելող ըմբոստներու դէմ:

«Լը Փիկարօ» օրաթերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ ան հերքեց «Լը Մոնտ»ի Երեքշարթի օրւան այն լուրը, թէ արեւելեան Զայիրի մէջ եւրոպացի եւ ափրիկեցի վարձկաններու ուժ մը կր կազմէ:

ԱԶԴԱԿ ՀԵՌ. ԽՄԲ. 239186 (ՊԷՅՐՈՒԹ) , 260780-583026 (ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ) .260115 (ՏՊԱՐԱՆ)
AZTAG, TEL.RED. 239186 (BEIRUT) ,260780-583026 (BOURJ HAMMOUD) , 260115 (IMP.) .P.O.B. 80860. BOURJ HAMMOUD
ԱԶԴԱԿ
هاتف دار التحرير ٢٣٩١٨٦ - بيروت - ٢٦٠١١٥ المطبعة
٥٨٣٠٢٦-٢٦٠٧٨٠ برج حمود - ص.ب ٨٠٨٦٠ برج حمود